Նյութ և մեթոդ: Հետազոտությունների համար փորձամուշները վերցվել են 6 դիտակետերից: (Ա-1) Աղստև գետը Դիլիջան քաղաքից առաջ գետի հոսքն ի վեր, (Ա-2) Աղստև գետը Դիլիջան քաղաքից հետո հոսքն ի վար, (Գ-3) Գետիկ գետի ստորին հոսանք, (Ա-4) Աղստև գետը Գետիկ վտակին միանալուց հետո, (Ա-5) Աղստև գետը Իջևան քաղաքից հետո հոսքն ի վար, (Գ-6) Հաղարծին վտակը: Փորձամուշները վերցվել են 5-անգամյա կրկնությամբ, ուսումնասիրվել է 90 փորձամուշ: Կատարվել է նմուշների տեսակավորում՝ ըստ Էկոլոգիական խմբերի (I-հիդրոֆիտներ, II-հելոֆիտներ, III-հիգրո-հելոֆիտներ, IV-հիգրոֆիտներ): Գետի հիդրոֆիտությունը հաշվարկվել է Բ.Ֆ. Սվիրիդենկոյի կողմից առաջարկված բանաձևով $I_{hd} = (2A/B) - 1$ [5]: Որոշվել է մակրոֆիտների տեսակային կազմը, ինչպես նաև մակրոֆիտների ընդհանուր և յուրաքանչյուր տեսակի պրոյեկտիվ ծածկույթը: Գետերի մակրոֆիտային համակեցությունների ընդհանրությունները որոշելու համար իրականացվել է Սյորենսենի ցուցիչի հաշվարկ $Ks = 2n(AB)/nA + nB$ [7]: Հետազոտություններն իրականացել են «Հայաստանի հյուսիսային շրջանների հատուկ պահպանվող տարածքների և Սևանա լճի ավազանի ֆաունայի և հիդրոբիոտների կենսաբազմազանության ուսումնասիրություն» բազային ծրագրի շրջանակներում:

Արդյունքներ և քննարկում: Աղստև գետ (Ա-1) Ա-1 դիտակետը Աղստև գետի մինչև Դիլիջան քաղաքն ընկած հատվածն է: Այստեղ գետը հոսում է անտառի միջով, ավերել ծառաշատ են, բնահողում գերիշխում են մեծ ժայռաքեկորները և գլաբարը: Հիդրոֆիտներից գրանցվել է միայն *Cladophora glomerata* L. թելանման ջրիմուռը, որը 2021թ. առաջացրել է 0,1-1% պրոյեկտիվ ծածկույթ: Ափամերձ հատվածում ամռանը գերիշխել է *Persicaria hydropiper* (3%) տեսակը, իսկ աշնանը՝ *Juncus inflexus* L.(3%) հիգրոհելոֆիտ տեսակը: Աշնանը ջրի ջերմաստիճանը նվազել է մինչև 3,5°C, և ամռանը հայտնաբերված բազմաթիվ տեսակների վեգետացիան ավարտվել է (աղ. 1, 2): Աղստև գետ (Ա-2)

Դիտակետը գտնվում է Դիլիջան քաղաքից հետո: Կանաչ թելանման ջրիմուռները 2021թ.-ին զարնան առաջացրել են 0,3 % պրոյեկտիվ ծածկույթ, որն ամռանն աճել է մինչև 3%, իսկ աշնանը նորից նվազել է (1 %): Գրանցվել են նաև *Equisetum arvense*, *Bidens tripartita*, *Persicaria hydropiper*, *Carex acuta* տեսակները: Մամուռներից հայտնաբերվել են *Amblystegium tenax* Hedw.Jenn, *Hygrohypnum ochraceum* Loeske տեսակները

Գետիկ գետի ստորին հոսանք (Գ-3)

Գետիկ գետը հոսում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերով, այն Աղստև գետի աջ վտակն է, երկարությունը 58 կմ է, ավազանի մակերեսը՝ 581 կմ: Սկիզբ է առնում Սևանի լեռնաշղթայի Զաշաթաղ գագաթի հյուսիսարևմտյան լանջերի աղբյուրներից, 2450 մետր բարձրությունից, հոսում է հյուսիս-արևմուտք [2]: Մինչև Գետիկ գետի ստորին հոսանք գետի վրա գործում են 3 ՀԷԿ, և գետի ջուրը պարբերաբար նվազում է, որի արդյունքում մակրոֆիտների համար նորմալ սուբստրատ չի ձևավորվում: Այս դիտակետում ամռանը հիդրոֆիտներից գրանցվել է միայն *Cladophora glomerata* թելանման ջրիմուռը, որն առաջացրել է 1% պրոյեկտիվ ծածկույթ, իսկ աշնանն այն նվազել է մինչև 0,2%: Ափամերձ գոտու տեսակներից դոմինանտել է *Persicaria hydropiper* հելոֆիտ տեսակը: 2021թ.-ին ափամերձ գոտու բույսերից գրանցվել են *Equisetum palustre* L., *Carex acuta* L., *Mentha aquatic* L., *M. caucasica* L., *Scirpus silvaticus* L., *Glyceria fluitans* R.Br., *Juncus articulatus* L., *Catabrosa aquatic* (L.) Beauv., *Lythrum salicaria* Blush, *Myosotis palustris* (L.) L., *Veronica anagallis-aquatica* L. (2) տեսակները: Մամուռներից գրանցվել է *Marchantia polymorpha* տեսակը:

Աղյուսակ 1. Աղստև, Գետիկ և Հաղարծին գետերի ջրաֆիզիկական ցուցանիշները

Դիտ.	Ա-1	Ա-2	Գ-3	Ա-4	Ա-5	Հ-6
			գարուն			
T°C	12	14	16	15.6	19	14
Vմ/վ	0.9	1	0.6	0.8	0.9	0.7
pH		8.1	8.6	8.4	8.3	8.3
			ամառ			
T°C	21	19	22	21	25	19
Vմ/վ	0.5	0.4	0.4	0.4	0.8	0.9
			աշուն			
T°C	3.5	3.5	5.5	5.5	8.5	8
Vմ/վ	0.3	0.6	0.5	0.9	1	1
pH	7.9	7.7	8	8.1	7.7	8.6

Աղյուսակ 2. Մակրոֆիտների տարածվածությունը Աղստևի գետավազանում (2021թ.)

Ընտանիք	Ցեղ	Տեսակ	ԷԿ	Ա-1	Ա-2	Գ-3	Ա-4	Ա-5	Հ-6
Amblystegiaceae	Amblystegium	Amblystegium tenax Hedw.Jenn	II	*	*			*	*
Amblystegiaceae	Cratoneuron	Cratoneuron commutatum (Hedw.)G.Roth	II						*
Amblystegiaceae	Hygrohypnum	Hygrohypnum ochraceum Loesk	I		*				*
Marchantiaceae	Marchantia	Marchantia polymorpha L.	II			*			*
Cladophoraceae	Cladophora	Cladophora glomerata L.	I	*	*		*	*	*
Araceae	Lemna	Lemna minor L.	I				*	*	
Asteraceae	Bidens	Bidens tripartita L.	IV	*	*			*	*
Lythraceae	Lythrum	Lythrum salicaria L.	III	*		*		*	
Boraginaceae	Myosotis	Myosotis palustris (L.) L.	IV			*		*	
Lamiaceae	Mentha	Mentha aquatica L.	II			*		*	
Lamiaceae	Mentha	M. caucasica Gand.	IV			*	*	*	
Plantaginaceae	Veronica	Veronica anagallis-aquatica L.	III	*				*	
Juncaceae	Juncus	Juncus inflexus L.	III	*				*	
Juncaceae	Juncus	J. articulatus L.	III	*		*		*	
Cyperaceae	Eleocharis	Eleocharis palustris (L.) Roem. Schult.	II	*	*				
Cyperaceae	Carex	Carex acuta L.	III	*	*	*		*	*
Cyperaceae	Scirpus	Scirpus radicans Schkuhr	III	*			*		
Cyperaceae	Scirpus	S. sylvaticus L.	IV	*		*		*	
Equisetaceae	Equisetum	Equisetum palustre L.	II		*	*		*	
Equisetaceae	Equisetum	E. arvense L.	IV					*	
Equisetaceae	Equisetum	E. fluviatile L.	II	*			*		
Poaceae	Catabrosa	Catabrosa aquatica (L.) Beauv.	III	*		*		*	*
Poaceae	Glyceria	Glyceria notata Chevall	II			*		*	
Ranunculaceae	Ranunculus	Ranunculus sceleratus L.	III				*	*	
Hydrodictyaceae	Hydrodictyon	Hydrodictyon reticulatum (Linnaeus) Bory	I	*			*		
Ulvaceae	Enteromorpha	Enteromorpha intestinalis (Linnaeus) Nees	I	*			*		
Alismataceae	Alisma	Alisma plantago-aquatica L.	II	*			*		
Polygonaceae	Persicaria	Persicaria hydropiper (L.) Delabe	III	*	*			*	
Onagraceae	Epilobium	Epilobium hirsutum L.	III	*					

Աղստև գետը Գետիկի խառնվելուց հետո (Ա-4)

Այս դիտակետում հիդրոֆիտներից դոմինանտել է *Cladophora glomerata* կանաչ ջրիմուռը, իսկ ափամերձ գոտու բույսերից՝ *Persicaria hydropiper* տեսակը: Կլադոֆորան առաջացրել է 0.1-10% պրոյեկտիվ ծածկույթ: Գետի ափեզրին գրանցվել են *Lemna minor* L. -ի կուտակումներ: Գրանցվել են նաև *Catabrosa aquatica*, *Bidens tripartite*, *Scirpus sylvaticus* տեսակները (աղ. 3):

Աղյուսակ 3. Նմանության ցուցանիշներն ըստ Սյորենսենի

	Ա-1	Ա-2	Գ-3	Ա-4	Ա-5	Հ-6
Ա-1		0.5	0.3	0.3	0.5	0.3
Ա-2			0.2	0.1	0.4	0.5
Գ-3				0.1	0.6	0.3
Ա-4					0.3	0.1
Ա-5						0.3
Հ-6						

Աղստև գետ (Ա-5)

Դիտակետն ընտրված է Իջևան քաղաքից հետո՝ գետի հոսքով վար: Հաշվետու ժամանակահատվածում գետի այս հատվածում դոմինանտել է *Cladophora glomerata* L. ջրիմուռը, որը, ժապավենաձև ձգվելով, գետի ափեզրերին առաջացրել է 7-10% պրոյեկտիվ ծածկույթ, ամռանը և աշնանը այն պատվել է պերիֆիտների գորշ շերտով: Ամռանը գրանցվել են *Hydrodictyon reticulatum* (L.) Bory և *Enteromorpha intestinalis* (L.) Nees տեսակները, որոնք գերադասում են կենսածին տարրերով (հատկապես ազոտական միացություններ) հարուստ միջավայր: Ափամերձ գոտու բույսերից գրանցվել են *Persicaria hydropiper* (L.) Delabre, *Alisma plantago-aquatica* L., *Bidens tripartite* L., *Catabrosa aquatica* (L.) Beauv., *Veronica anagallis-aquatica* L. (աղ. 3):

Հաղարծին գետ (Հ-6)

Աղստև գետի ձախ վտակն է, սկիզբ է առնում Հալաբի լեռնաշղթայի հարավային լանջից, երկարությունը 10 կմ է [2]: Գետի այս հատվածում ջրիմուռներ և հիդրոֆիտ այլ բույսեր չեն գրանցվել: Մամուռներից բացահայտվել են լյարդամամուռ *Marchantia polymorpha* L., *Amblystegium tenax* և *Cratoneuron commutatum* (Hedw.) G.Roth տեսակները: Այս տեսակները պատել են գետի մեջ գտնվող ժայռաբեկորները: Մակրոֆիտներն առաջացրել են 10-15% պրոյեկտիվ ծածկույթ:

Աղստևի գետավազանում 2021թ.-ին գրանցվել են 19 ընտանիքի պատկանող 29 տեսակ, որոնցից 5-ը հիդրոֆիտ են, 9-ը՝ հելոֆիտ, 10-ը՝ հիգրոհելոֆիտ և 5-ը՝ հիգրոֆիտ տեսակներ են (աղ.2):

Ըստ Սյորենսենի նմանության գործակցի (աղ. 3)՝ համեմատաբար բարձր նմանություն է արձանագրվել Աղստև գետի՝ Դիլիջան քաղաքից առաջ և հետո դիտակետերի, ինչպես նաև Դիլիջան և Իջևան քաղաքներից հետո դիտակետերի միջև, նմանության բարձր գործակցից է գրանցվել նաև Գետիկի ստորին հոսանքի և Աղստև գետի՝ Իջևան քաղաքից հետո ընկած դիտակետի միջև:

Չնայած ըստ pH-ի արժեքի, Աղստև և Գետիկ գետերի ջրերը պատկանում են թույլ հիմնային և հիմնային ռեակցիա ունեցող ջրերի դասին (աղ. 1), որը հիդրոբիոտների մեծ մասի զարգացման համար լավագույն սահման է, մակրոֆիտների աճն ու տարածումը խիստ սահմանափակ են:

Ըստ հիդրոֆիտության գործակցի Աղստևի ավազանի հետազոտված գետերը մակրոֆիտների տեսանկյունից չեն համարվում հիդրոֆիտային գետեր: Հիդրոֆիտության գործակցը հավասարվել է 0.03-ի, որն էլ դժվարացնում է ջրի որակի գնահատումը մակրոֆիտների միջոցով, քանի որ ջրի որակի փոփոխություններին ավելի արագ արձագանքում են հիդրոֆիտները: Հիդրոֆիտ մակրոֆիտների տեսակների

սահմանափակ քանակը հավանաբար պայմանավորվել է մի քանի պայմաններով.

- գետի ռելիեֆով՝ այստեղ առկա լեռնային գետերին բնորոշ ջրվեժներով և սահանքներով,

- հեղեղումներով, որոնք սկսվում են գարնանը՝ մայիսի երկրորդ և երրորդ տասնօրյակներում, ավարտվում են հուլիսին: Աշնանային ողողումների բարձրակետը լինում է սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին [4]: Աղստև գետ են լցվում հոսքաջրեր, բնակավայրերի կոյուղաջրեր (Իջևան քաղաքում ջրան կոյուղու կոլեկտոր, կեղտաջրերի մաքրման կայան), օբյեկտներից սննդի մնացորդներ, պոլիէթիլենային շշեր, պարկեր, և հաճախ գետը դուրս է գալիս հունից և ողողում ափերը [1]: Հեղեղումների հիմնական պատճառներից է նաև գետի աջափնյա լանջի սողանքը, որը վարարումների ընթացքում սահելով փակում է գետի հունը: Հեղեղումներից խուսափելու նպատակով գետի հունը պարբերաբար մաքրվում է ծանր տեխնիկայով, ինչը մակրոֆիտների սահմանափակ տարածման պատճառներից մեկն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Իջևանի շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ծրագիր/ Իջևան, 2015:
2. Հայաստանի Հանրապետության ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու բառարան, Երևան, «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՊՈԱԿ», 150 էջ, 2007:
3. Հայաստանի Բնաշխարհի Հայկական Հանրագիտարան հրատարակչություն, Երևան, 690 էջ, 2006:
4. Միսակյան Ա.Է., Առաքելյան Ա.Ա., Սուրենյան Գ.Հ., Ազիզյան Հ.Հ. Աղստև գետի ավազանում 2020թ. մայիսին դիտված գարնանային վարարումների առավելագույն ելքերի ձևավորման հիդրոդերևութաբանական պայմանների վերլուծություն /ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 73, 3, էջ 3-10, 2020:
5. Свириденко Б.Ф.. Структура водной флоры Северного Казахстана. Бот. журнал, 82, 11, с. 46-57, 1997.
6. Файвуш Г.М., Алексанян А.С. /Местообитания Армении/ Монография, институт ботаники НАН РА, Ереван, 360 с., 2016.
7. Sorensen T. A method of establishing groups of equal amplitude in plant sociology based on similarity of species content // Kongelige Danske vidensk Selsk., 5, 4, p. 1-34, 1948.

Ստացվել է 25.04.2022



Биолог. журн. Армении, 4 (74), 2022

DOI:10.54503/0366-5119-2022.74.4-25

О ПРИМЕНЕНИИ ГЕРБИЦИДОВ НА ПОСЕВАХ СТОЛОВОЙ СВЕКЛЫ

А.Л. БАЛАЯН, **А.Г. АГАРОНЯН**, С.М. САРКИСЯН

*Научный центр анализа и оценки рисков в сфере безопасности пищевых продуктов
sonasargsyan999@gmail.com*

В условиях Ширакской области на посевах столовой свеклы испытаны гербициды Дуал Голд и Зеллек Супер в дозах, соответственно, 1,5 и 1 л/га. Оба препарата проявили высокую биологическую эффективность против определенных групп сорняков и способствовали прибавкам урожая, которая была больше в варианте с Дуал Голдом.

Остаточные количества гербицидов в урожае не обнаружены. Не выявлено также существенных отклонений от контроля в содержаниях основных биохимических показателей в корнеплодах столовой свеклы.

Гербициды – детоксикация – столовая свекла – биохимические показатели

Շիրակի մարզի պայմաններում սեղանի ճակնդեղի ցանքերում փորձարկվել են Դուալ Գոլդ և Չելլեկ Սուպեր հերբիցիդներ, համապատասխանաբար՝ 1,5 լ/հա և 1 լ/հա չափաքանակներով: Երկու պատրաստուկն էլ ցուցաբերել են բարձր կենսաբանական արդյունավետություն մոլախոտերի որոշ խմբերի նկատմամբ և նպաստել բերքի հավելմանը, որն ավելի էր Դուալ Գոլդի տարբերակում:

Եզված պատրաստուկների մնացորդային քանակներ բերքում չեն հայտնաբերվել: Արմատապտուղներում հիմնական կենսաքիմիական ցուցանիշների քանակությունների էական շեղումներ ստուգվել չեն դիտվել:

Հերբիցիդներ – թունազրկում – սեղանի ճակնդեղ – կենսաքիմիական ցուցանիշներ

Under Shirak region conditions on table beet's sowing herbicides Dual Gold and Zellek Super in 1,5 and 1 l/ha dosages have been tested. They showed high biological efficacy against certain groups of weeds and increased the crop, which was more in the version with Dual Gold. No residues of them in crop have been detected. It was not revealed essential deviation of contents of main biochemical indices of root - crops from check.

Herbicides – detoxication – table beet – biochemical indices

Условия Ширакской области с черноземной почвой благоприятны, как для выращивания столовой свеклы, так и роста сорной растительности, которая наносит большой ущерб культуре, особенно в фазе ее розетки.

Новые методы и средства защиты сельскохозяйственных растений пока не получили широкого применения, и химический метод остается наиболее выгодным.

Ассортимент гербицидов расширяется с каждым годом, одни заменяются другими, более эффективными, менее стабильными, с малыми нормами расхода.

Однако, следует учесть, что они обладают токсичностью, и их остатки по нижеприведенным причинам могут сохраняться в сельскохозяйственных культурах длительное время, вплоть до сбора урожая, представляя, тем самым, опасность для здоровья населения.

В объектах окружающей среды они разлагаются фотохимически, гидробионтами, почвенной флорой и фауной до простых нетоксичных соединений. Главную же роль в этом процессе играют почвенные микроорганизмы и органические вещества в почве. Последние оказывают двоякое действие на разложение гербицидов. В почвах с более высоким содержанием гумуса многие гербициды дестоксицируются медленнее, так как они переходят в труднодоступную для микроорганизмов форму [4].

С повышением до оптимальных значений температуры и влажности микробиологическое разложение указанных препаратов ускоряется, вследствие активации деятельности микроорганизмов [12].

Доля участия микробиологического и химического процессов в разложении указанных препаратов зависит и от pH среды [11]. Как видим, пути трансформации их в почве различны и определяются рядом факторов.

В связи с вышеизложенным, во избежание наличия токсичных веществ в сельскохозяйственной продукции при использовании гербицидов, необходимо вести контроль за содержанием их остатков в растительных продуктах в конкретных агроклиматических условиях. Последние влияют и на эффективность гербицидов. Так, в опытах Гармашова и др. [3] и Турусова с сотр. [10] при засушливых условиях в начале вегетации эффективность почвенных гербицидов снижалась, что приводило к угнетению культурных растений и в дальнейшем сказалось на их урожайности. А при достаточном увлажнении почвы они способствовали ее увеличению.

На эффективность защиты культурных растений влияет также выбор адекватного препарата, нормы его расхода, устанавливаемой для каждого конкретного поля в зависимости от фитосанитарной обстановки [1].

В работе Мельцаева и др. [6] приводится порог вредоносности сорняков для свеклы, составляющий 7-11 шт/м². На нашем опытном поле их насчитывалось несколько десятков, что вызвало необходимость применения химической прополки. В связи с этим перед нами была поставлена задача изучения эффективности гербицидов Дуал Голд и Зеллек Супер, а также их влияния на качество и количество урожая столовой свеклы в условиях Ширавской области.

Материал и методика. Двухлетние опыты (2020-2021 гг.) были поставлены на поле столовой свеклы сорта Бордо-237 в общине Ахурян Ширавской области в 3-х повторностях (каждая площадью по 50 м²).

Дуал Голдом [концентрат эмульсии (к.э.), действующее вещество (д.в.) – метофлор, 960 г/л] в дозе 1,5 л/га была опрыснута весной поверхность почвы после сева до всходов культуры.

Зеллек Супером (к.э., д.в. – галоксифоп – р – метил, 104 г/л) в дозе 1 л/га опрыснуты посевы свеклы после ее прорастания при высоте сорняков 10-15 см.

Расход рабочей жидкости составил по 500 л/га.

Учеты сорняков до и после опрыскивания проводились по общепринятой в гербологии методике [7].

Пробы корнеплодов столовой свеклы для анализов были взяты перед сбором урожая. Остаточные количества Дуал Голда определялись по методу Красных и др. [5], Зеллек Супера – по методу Калинина и др. [8].

Содержание витамина С определялось по методу Мурри [9], сахаров – Бертрана [9], сухое вещество – весовым методом, общей кислотности – титрованием по яблочной кислоте [9].

Статистическую обработку полученных результатов проводили по Берштейну [2].

Результаты и обсуждение. Учеты сорняков перед опрыскиванием препаратами показали, что на опытном поле преобладают двудольные сорняки, представителями которых из малолетних отмечены, в основном, щирица, редька дикая, пастушья сумка, из многолетних – осот полевой, горчак. Из однодольных малолетних – овсюг и мятлик однолетний, зафиксированы также горец, просо куриное, из многолетних – костёр безостый, плевел, полевница.

Дуал Голд проявил высокую биологическую эффективность против однолетних однодольных и двудольных сорняков. Из табл. 1 видно, что в его варианте общая численность малолетних сорняков, включающих группы однолетних и двулетних, сократилась со 110 шт/м² до 22 шт/м² (на 80%). Зеллек Супер был эффективен против однодольных однолетних и многолетних, суммарная численность их снизилась с 44 шт/м² до 7 шт/м² (на 84%), к нему не были чувствительны двудольные сорняки.

Таблица 1. Численность однодольных и двудольных сорняков на поле столовой свеклы до и после применения гербицидов (шт/м², в скобках – ее снижение в %)

Варианты опыта	Однодольные сорняки		Двудольные сорняки	
	малолетние	многолетние	малолетние	многолетние
Контроль	29±2,2	8±0,4	81±2,4	10±0,5
Дуал Голд	6±0,7 (78±1)	7±0,4 (12±0,4)	16±1,5 (80±1)	8±0,4 (20±0,7)
Контроль	32±2,1	12±1,2	87±2,7	8±0,5
Зеллек Супер	5±0,7 (85±1,5)	2±0,4 (79±1)	90±3,2 (-3±0,06)	9±0,5 (-12±0,04)

В течение вегетации под влиянием вышеуказанных факторов происходила детоксикация препаратов и к периоду сбора урожая остаточных количеств их в корнеплодах столовой свеклы не обнаружено.

Поскольку гербициды проникают и в защищаемые растения, где в силу своей биологической активности, могут вызывать изменения в обмене веществ, то важен контроль не только за содержанием их остатков в сельскохозяйственной продукции, но и влиянием на основные биохимические показатели получаемого урожая.

Таблица 2. Влияние гербицидов на основные биохимические показатели столовой свеклы

Варианты опыта	Сухое вещество, %	Витамин С, мг %	Сахара, %		Общая кислотность, %
			моносахариды	сахароза	
Контроль	15,2 ± 0,07	32 ± 0,45	0,5 ± 0,005	7,3 ± 0,03	0,3 ± 0,005
Дуал Голд	14,8 ± 0,06	32 ± 0,4	0,47 ± 0,004	7,0 ± 0,04	0,3 ± 0,004
Зеллек Супер	15,0 ± 0,06	33 ± 0,46	0,46 ± 0,004	6,8 ± 0,03	0,3 ± 0,004

Статистическая обработка результатов биохимических анализов, приведенных в табл. 2, показала, что разницы между контролем и вариантом с Дуал Голдом в содержаниях сухого вещества (на 0,4%), моносахаридов (на 0,03%), сахарозы (на 0,3%), а в варианте с Зеллек Супером – в содержаниях моносахаридов (на 0,04%) и сахарозы (на 0,5%) – достоверны, поскольку рассчитанные нами (фактические) значения *t* – критерия Стьюдента, составляющие, соответственно, 3,586; 3,330; 4,931; 5,081 и 9,998, превышают значение *t* – критерия табличного (по Берштейну), равного 3,182 (при *P*_{0,95} и *n*=3).

Указанные отклонения от контроля в содержаниях основных биохимических показателей оказались не столь существенными, чтобы повлиять на органолептические свойства продукции.

Снижение засоренности поля с помощью химической прополки способствовало прибавкам урожая: в варианте с Дуал Голдом – на 59 ц/га, с Зеллек Супером – на 46 ц/га.

Исходя из полученных данных, можем заключить, что в условиях Ширакской области в указанных дозах Дуал Голд эффективен против малолетних сорняков, как однодольных, так и двудольных, а Зеллек Супер – против малолетних и многолетних однодольных. Оба препарата не загрязняют урожай, не ухудшают его качество и способствуют его прибавкам, причем Дуал Голд в большей степени, чем Зеллек Супер.

ЛИТЕРАТУРА

1. Артохин К.С., Игнатова П.К. Сорные растения и меры борьбы с ними. Ростов-на-Дону. Изд. Foundation, стр. 466, 2016.
2. Берстейн А. Справочник статистических решений. М., Статистика, стр. 162, 1968.
3. Гармашов В.М., Корнилов И.М., Нужная Н.А., Гаврилова С.А., Беспалов А.В., Говоров В.Н. Засоренность посевов гороха в зависимости от способов обработки почвы, внесения минеральных удобрений и гербицидов. Защита и карантин растений. N 10, стр. 22-24, 2015.
4. Зименко Т.Г., Самсонова А.С., Мисник А.Г. Микробные ценозы торфяных почв и их функционирование. Минск. Наука и техника. стр. 111, 1983.
5. Клисенко М.А., Калинина А.А., Новикова К.Ф., Хохолкова Г.А. Методы определения микроколичеств пестицидов в продуктах питания, кормах и внешней среде. М., Колос. I, стр. 313-315, 1992.
6. Мельцаев И.Г., Эседуллаев С.Т., Лоцинина А.Э. Влияние технологий обработки почвы и гербицидов на засоренность и продуктивность сельскохозяйственных культур. Защита и карантин растений. N 3, стр. 12-16, 2019.
7. Методические указания по полевому испытанию гербицидов в растениеводстве. М., стр. 46, 1981.
8. Определение остаточных количеств пестицидов в пищевых продуктах, сельскохозяйственном сырье и объектах окружающей среды. Сборник методических указаний. М., Федеральный центр гигиены и эпидемиологии Роспотребнадзора. стр. 17- 42, 2009.
9. Плешков Б.П. Практикум по биохимии растений. М., Колос. стр. 255, 1985.
10. Турусов В.И., Гармашов В.М., Нужная Н.А., Корнилов И.М. Использование гербицидов при возделывании подсолнечника. Защита и карантин растений. N 9, стр. 43-44, 2018.
11. Khan S. Pesticides in soil environment. Amsterdam: Elsevier, North-Holland, p. 240, 1980.
12. Kurle K., Walker A. Interaction between Herbicides and the Soil. London - New York: Acad. Press. p. 83, 1980.

Поступила 23.08.2022



**Հողի մշակման սարքեր եղանակների եւ
հողաբուսականությանը ազդեցությունը աշխարհում
գյուղատնտեսական տնտեսության եւ բերքի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ՏԱՐՐԵՐԻ ՎՐԱ**

Կ.Ա. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
karen.gharakhanyan97@gmail.com

Հողվածում ներկայացված են հողի մշակման տարբեր եղանակների, հանքային պարարտանյութերի և կենսահումուսի համարժեք չափաբանակների և դրանց ֆոսֆորի վրա բենտոնիտի կիրառման ժամկետների ազդեցությամբ աշխարհում գյուղատնտեսական տնտեսությանը ազդեցությունը: Կոտայքի մարզի Ֆանտան համայնքի անջրդի երկրագործության պայմաններում կատարված հետազոտություններով պարզվել է, որ սևահողերում աշխարհում գյուղատնտեսական տնտեսությանը ազդեցությունը, հողի մշակման փորձարկված երեք եղանակներից (անվար, միայն փխրեցում՝ 10-12 սմ, խորը վար՝ 22-25 սմ) արդյունավետը միայն հողի սկզբնական վիճակում փխրեցումն է, իսկ պարարտացման տեխնոլոգիաներից լավագույնը կամ հանքային պարարտանյութերի $N_{60}P_{60}K_{60}$, կամ կենսահումուսի 3.5 տ/հա համարժեք չափաբանակների ֆոսֆորի վրա բենտոնիտի 3 տ/հա չափաբանակի աշխարհում կիրառումն է, որոնց դեպքում բարձրանում է բույսերի ծախսարկունակությունը, առաջանում է բարելավված միջավայր աշխարհում-ցանի տրամալ աճի ու զարգացման համար, և արդյունքում ստացվում է 51.3-54.9 գ/հա հատիկի և 98-102 գ/հա ծղոտի բերք:

*Հողի մշակման եղանակներ – հանքային պարարտանյութեր – կենսահումուս – բենտոնիտ –
կիրառման ժամկետներ – ծախսարկունակություն*

В статье представлены результаты исследований зимостойкости, роста, развития и изменения структурных элементов урожая под влиянием различных способов обработки почвы, эквивалентных количеств минеральных удобрений и биогумуса и сроков внесения на их фоне бентонита. Исследованиями, проведенными в условиях багарного земледелия в общине Фонтан Котайкского марза, установлено, что при возделывании озимой пшеницы на черноземах из трех испытанных способов обработки почвы (нулевая обработка, только рыхление 10-12 см, глубокая вспашка 22-25 см), наиболее эффективно только рыхление с дискованием почвы, а лучшей технологией подкормки является осеннее внесение бентонита – 3 т/га на фоне минеральных удобрений $N_{60}P_{60}K_{60}$ или биогумуса в пересчете на 3,5 т/га, при котором в случаях повышения зимостойкости растений, создаются улучшенные условия для нормального роста и развития озимых культур, в результате получается урожай зерна 51,3-54,9 ц/га и соломы 98-102 ц/га.

*Способы обработки почвы – минеральные удобрения – биогумус – бентонит – сроки
внесения – зимостойкость*

The article presents the results of the studies on the winter resistance, growth, development, and changes in the structural elements of the crop under the influence of different methods of soil cultivation, equivalent amounts of mineral fertilizers, and biohumus and bentonite application dates against their background. The research conducted in the conditions of waterless agriculture in the Fantan community of the Kotayk region revealed that the cultivation of winter wheat in black soils, out of the three tested methods of soil cultivation (no-till, only loosening: 10-12 cm, deep plowing: 22-25 cm), only loosening with soil discing is the most effective, and the best fertilizing technology is the autumn application of bentonite 3 t/ha on the background of mineral fertilizers N60P60K60 or biohumus equivalent to 3.5 t/ha, in which cases the winter resistance of plants increases, an improved environment for the normal growth and development of autumn crops is created and as a result 51.3 - 54.9 c/ha of grain and 98-102 c/ha of straw yield.

*Soil cultivation methods – mineral fertilizers – biohumus – bentonite –
application dates – winter resistance*

Ազգաբնակչության կենսապահովման կարևորագույն նախապայմանը պարենամթերքների առկայությունն է: Աշխարհում հիմնական պարենամթերքների հիմքը՝ ցորենը, իր սննդարարությամբ և օգտագործման բազմազանությամբ զբաղեցնում է ուրույն տեղ:

Բազմաթիվ հեղինակներ [1, 2, 4, 5, 14] իրենց աշխատանքներում նշում են, որ աշնանացան ցորենի, ինչպես նաև այլ հացահատիկային մշակաբույսերի բերքն ու որակը մեծապես պայմանավորված են արտաքին միջավայրի պայմաններով և բույսերի կենսաբանական առանձնահատկություններով: Ըստ այդ հեղինակների՝ աշնանացան ցորենի աճի ու զարգացման և ձմեռելու համար նրա վերցրած սննդատարրերի քանակի վրա մեծապես ազդում են միջավայրը, սորտային առանձնահատկությունները և հատկապես հանքային սննդառության պայմաններն ու սննդատարրերի տեսակն ու քանակը [8, 9, 12]:

Աշնանացան ցորենի ձմեռադիմացկունությունն ուսումնասիրելու ժամանակ ոչ միայն պետք է արձանագրել սորտի կենսաբանական առանձնահատկություններն ու իմանալ ֆիզիոլոգիական գործընթացները, այլև պետք է պարզել այն արդյունավետ միջոցառումները, որոնք նպաստում են բույսերի՝ ձմեռադիմացկունության բարձրացմանը:

Ն. Սիսակյանի [16] փորձերով պարզվել է, որ աշնանացանների ձմեռադիմացկունության և երաշտադիմացկունության վրա ֆոսֆորական պարարտանյութերի հետ միասին անփոխարինելի դեր է կատարում նաև կալիումականը: Հեղինակը պարզել է, որ կալիումը ոչ միայն բարձրացնում է բջջախյուրի խտությունը, այլև ակտիվացնում բույսերի ֆերմենտ սինթեզելու կարողությունները:

Միևնույն ժամանակ պարզվել է, որ ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի հետ ազոտական պարարտանյութերի ցածր և միջին չափաքանակները (N_{30-60} կգ/հա) բացասական ազդեցություն չեն ունենում աշնանացանների ձմեռադիմացկունության վրա [8, 10, 13], իսկ ազոտի բարձր չափաքանակները (N_{90-120} կգ/հա) բացասական են ազդում [18]: Նշված հեղինակների կարծիքով ազոտի ցածր և միջին չափաքանակների բացասական ազդեցությունը մեղմացնում են ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերը, իսկ բարձր չափաքանակների ազդեցությամբ բույսերի ինտենսիվ աճման և ֆիզիոլոգիական պրոցեսների բարձր ակտիվությունը ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերն այդչափ չեն կարողանում մեղմել: Արդյունքում ստացվում է բացասական հետևանք, բայց ոչ այն չափով, ինչ չափով ազդում են միայն ազոտական պարարտանյութերը:

1970-ական թվականներից հանրապետությունում լայնորեն շրջանառվում է բարձր բերքատու Բեզոստայա 1-ը (Անբիստ 1), որն իր նախորդներից տարբերվում է յուրահատուկ կենսաբանական առանձնահատկություններով: Այն զգայուն է ջրի նկատմամբ, համեմատաբար քիչ է վարակվում հիվանդություններով, ունի մեծ պահանջարկ սննդատարրերի նկատմամբ, խիստ կայուն է պառկելու հանդեպ և մշակվում է ցած-

րադիր տարածաշրջաններից մինչև ծովի մակերևույթից 2400 մ բարձրությունները: Ամեն տարի հատկապես բարձրլեռնային և նախալեռնային գոտու ջրովի և անջրդի երկրագործության պայմաններում աշնանացան հացաբույսերը զգալիորեն տուժում են ցրտահարություններից, որի պատճառով շատ հաճախ նվազում է բերքատվությունը՝ ֆերմերային ու անհատական տնտեսություններին պատճառելով հսկայական նյութական ու ֆինանսական վնասներ: Հետևաբար՝ ցանկացած ուսումնասիրություն, որը միտված է աշնանացան ցորենի աճի, զարգացման համար անհրաժեշտ միջավայրի առաջացման ու սննդատարների ապահովմանը, կարևոր է ու արդիական և բխում է բնակչության պարենային անվտանգության ապահովման պահանջներից:

Նյութ և մեթոդ: Ուսումնասիրությունները կատարվել են 2021-2022 թվականներին Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի Ֆանտան համայնքի անջրդի պայմաններում: Դաշտային փորձերը դրվել են կրազերծված սովորական սևահողերի վրա, որը բնութագրական է այդ տարածաշրջանի համար, և աշնանացան հացահատիկային մշակաբույսերը (հիմնականում աշնանացան ցորեն) մշակվում են այդ հողատիպի վրա, որտեղ հումուսի պարունակությունը կազմում է 5.5%, ունեն չեզոքին մոտ միջավայրի ռեակցիա (рН 6.9-7.2), հեշտ հիդրոլիզվող ազոտի պարունակությունը 100 գրամ հողում կազմում է 4.30 մգ, շարժուն ֆոսֆորինը՝ 6.90 մգ և փոխանակային կալիումինը՝ 37.0 մգ: Փորձադաշտի հողերը հումուսով միջին չափով են ապահովված, ազոտով՝ թույլ, իսկ ֆոսֆորով և կալիումով՝ լավ [3, 4, 7]:

Հետազոտությունները նպատակ են ունեցել տարածաշրջանում առաջին անգամ ուսումնասիրելու հողի մշակման տարբեր եղանակների, հանքային պարարտանյութերի և կենսաախուժուկի համարժեք չափաքանակների և դրանց ֆոնի վրա բենտոնիտի կիրառման ժամկետների ազդեցությունն աշնանացան ցորենի ձմեռադիմացկունության, բույսերի աճի ու զարգացման փուլերի անցման, բերքի կառուցվածքային տարրերի վրա և բացահայտելու հողամշակման և պարարտացման լավագույն տարբերակը՝ գյուղատնտեսական արտադրությունում ներդրելու համար:

Դաշտային փորձերը դրվել են երեք կրկնողությամբ, պարարտացման յուրաքանչյուր փորձամարզը հողամշակման ամեն եղանակում կազմել է 50 մ², հետևյալ տարբերակներով.

1. Ստուգիչ (առանց պարարտացման),
2. N₆₀P₆₀K₆₀,
3. Կենսաախուժուկ 3.5 տ/հա,
4. N₆₀P₆₀K₆₀ + բենտոնիտ 3տ/հա (աշնանը),
5. Կենսաախուժուկ 3.5 տ/հա + բենտոնիտ 3տ/հա (աշնանը),
6. N₆₀P₆₀K₆₀ + բենտոնիտ 3տ/հա (գարնանը),
7. Կենսաախուժուկ 3.5 տ/հա + բենտոնիտ 3տ/հա (գարնանը):

Պարարտանյութերի և բենտոնիտի նշված տարբերակները կիրառվել են հողի մշակման տարբեր եղանակների՝ անվար կամ 0-ակն վարի, միայն փխրեցման կամ սկավառակման (10-12 սմ) և խոր վարի (22-25 սմ) դեպքերում:

Բոլոր տարբերակներում հանքային պարարտանյութերի և կենսաախուժուկի համարժեք չափաքանակները տրվել են հողին աշնանը՝ ցանքից առաջ փոցիսմամբ, բենտոնիտի Նորման հանքային պարարտանյութերի և կենսաախուժուկի տարբերակներում (4-րդ, 5-րդ) կիրառվել է աշնանը, իսկ 6-րդ և 7-րդ տարբերակներում՝ գարնանը Նորից փոցիսման միջոցով խառնելով հողի հետ:

Աշնանացան ցորենի (Բեզոստայա-1) ցանքի, հետագա մշակումների և բերքահավաքի աշխատանքներն իրականացվել են տարածաշրջանում ընդունված ագրոկանոնների համաձայն: Հողերի ագրոքեմիական և ագրոֆիզիկական ցուցանիշները որոշվել են համընդհանուր մեթոդներով, որոնք բերված են Բ.Ա. Յագոդինի խմբագրությամբ հրատարակված ագրոքեմիական անալիզների մեթոդական ձեռնարկում [17], բույսերի քանակի հաշվառումը աշնանը և գարնանը (ցրտահարված և ոչնչացված բույսերի քանակը և տոկոսը) կատարվել է ըստ Ա. Ի. Ռուդենկոյի [15]: Աշնանացան ցորենի բերքի քանակը որոշվել է բերքահավաքի ժամանակ համատարած բերքի հաշվառման մեթոդով: Բերքատվության տվյալները ենթարկվել են մաթեմատիկական վերլուծության, փորձի սխալի (S_x %) և ամենաեական տարբերության (ԱԷՏ 0.95, g) որոշումով, դիսպերսիոն վերլուծության մեթոդով [11]:

Արդյունքներ և քննարկում: Ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել է, որ ինչպես հողի մշակման եղանակները, այնպես էլ հանքային պարարտանյութերի ու կենսաախուժուկի համարժեք չափաքանակներն ու դրանց ֆոնի վրա տարբեր ժամկետ-

ներում բենտոնիտի միևնույն չափաքանակի կիրառումը հողի մշակման տարբեր եղանակների դեպքերում որոշակի ազդեցություն են ունեցել աշխատանքային գործնի ձմեռադիմացկունության, աճի, զարգացման, բերքի կառուցվածքային տարրերի և քանակի վրա:

Այսպես, եթե հողի մշակման անվար եղանակի դեպքում աշխատանքային գործնի բույսերի ցրտահարվածությունը կազմել է 21.7 % կամ 1 մ² վրա աշխատանքային թփակալված բույսերի համեմատ ոչնչացված բույսերի քանակությունը կազմել է 131 հատ, միայն փխրեցմամբ հողի մշակման եղանակի դեպքում ոչնչացված բույսերի քանակությունը՝ 95 հատ/մ² (15.7 %), սովորական վարի դեպքում համապատասխանաբար՝ 100 հատ/մ² և 17 % (աղ. 1), ապա հողի մշակման նշված եղանակներում հանքային պարարտանյութերի և կենսահումուսի համարժեք չափաքանակների կիրառման տարբերակներում բույսերի ցրտահարվածությունը նվազել է, և անվար եղանակի դեպքում այն կազմել է 14.9-15.5 %, միայն փխրեցման տարբերակներում՝ 11.2-11.7 %, իսկ սովորական վարի տարբերակներում՝ 10.9-11% կամ հանքային պարարտանյութերի և կենսահումուսի համարժեք չափաքանակները առանց պարարտացման տարբերակների համեմատ բույսերի ցրտադիմացկունությունն անվարի դեպքում բարձրացել է 6.2-6.8 %-ով, միայն փխրեցման եղանակի դեպքում՝ 4-4.5 %-ով, իսկ սովորական վարի դեպքում՝ 6-6.1 %-ով:

Ուսումնասիրությունները միևնույն ժամանակ ցույց են տվել, որ հանքային պարարտանյութերի և կենսահումուսի ֆոնի վրա բենտոնիտի 3տ/հա չափաքանակը, երբ հող է մտցվել աշխատանքային, այդ տարբերակներում (4-րդ, 5-րդ) հողի մշակման բոլոր եղանակների ընթացքում բույսերի ձմեռադիմացկունությունն առանց պարարտացման տարբերակների համեմատ բարձրացել է 10-10.8 %-ով անվարի ժամանակ, 7.4-8.3 %-ով՝ միայն փխրեցման ժամանակ և 9-10 %-ով՝ սովորական վարի ժամանակ, իսկ համապատասխան ֆոների համեմատ բույսերի ձմեռադիմացկունությունը բարձրացել է համապատասխանաբար 3.8-4 %-ով, 3.4-3.8 %-ով և 3-3.9 %-ով: Մինչդեռ զարնանը հիշատակված ֆոների վրա տրված բենտոնիտի նույն չափաքանակը, հասկանալի պատճառով, էական նշանակություն չի ունեցել բույսերի ձմեռադիմացկունության վրա:

Հողի մշակման տարբեր եղանակների դեպքում աշխատանքային գործնի բույսերի ցրտահարվածության տարբերությունը մեկնաբանվում է հետևյալ կերպ: Հաշվի առնելով, որ հողի մշակման անվար եղանակի դեպքում, հողի փխրունությամբ պայմանավորված, հատիկները ցանքի ժամանակ հողածածկվել են 2-3 սմ հողաշերտով, իսկ փխրեցման և սովորական վարի դեպքում՝ մինչև 7-8 սմ խորություններում: Հետևաբար՝ բույսերի թփակալման հանգույցի՝ հողի մակերեսային շերտում գտնվելու պատճառով (անվարի դեպքում) ուշ աշնանային և վաղ գարնանային ցրտահարություններից բույսերը ցրտահարվել են: Արդյունքում անվար եղանակով հողի մշակման դեպքում բույսերը ցրտահարվել են 21.7 %-ով, իսկ փխրեցման և սովորական վարի դեպքում համապատասխանաբար՝ 15.7%-ով և 17%-ով: Հանքային պարարտանյութերի և կենսահումուսի համարժեք չափաքանակները, որոնք գրեթե նույն կերպ են նպաստել բույսերի ձմեռադիմացկունության բարձրացմանը, սակայն հողի մշակման եղանակով դրանց ազդեցության այդ օրինաչափությունն ամենուրեք պահպանվել է:

Ինչ վերաբերում է հանքային պարարտանյութերի և կենսահումուսի համարժեք չափաքանակների ֆոնի վրա բենտոնիտի չափաքանակի աշխատանքային ազդեցությանը, հողի մշակման բոլոր եղանակներում բույսերի ձմեռադիմացկունությունը բարձրացել է միջին հաշվով 3-3.9 %-ով: Դա մեկնաբանվում է բենտոնիտի կառուցվածքով, բաղադրությամբ (պարունակում է երկաթ, բոր, կալցիումի կարբոնատ, մագնեզիում, կալիում և աննշան քանակությամբ ֆոսֆոր), որոնց ազդեցությամբ հատկապես Mg-ի (ակտիվանում է ֆոտոսինթեզի ինտենսիվությունը) և K-ի (բույսերում ակտիվանում է շաքարի կուտակման գործընթացը), աշխատանքային բույսերի թփակալման հանգույցում կուտակվում է զգալի քանակությամբ շաքար և բարձրացնում բույսերի՝ ցրտահարություններին դիմանալու և ոչնչացումը կանխարգելելու կարողությունները:

Աղյուսակ 1. Հողի մշակման տարբեր եղանակների, հանքային պարարտանյութերի և կենսահումուսի համարժեք չափաբանակների և դրանց ֆոսֆոր բեռնատնիքի կիրառման ժամկետների ազդեցությունը աշխանացան ցորենի ձմեռադիմացկունության վրա

	Տարբերակները	Անվար (0-ական վար)				Միայն փխրեցման (10-12 սմ)				Մովորական վար (22-25 սմ)			
		բույսերի քանակը 1 մ ² վրա, հատ		ոչնչացված բույսերի քանակը		բույսերի քանակը 1 մ ² վրա, հատ		ոչնչացված բույսերի քանակը		բույսերի քանակը 1 մ ² վրա, հատ		ոչնչացված բույսերի քանակը	
		աշնանը	գարնանը	հատ	%	աշնանը	գարնանը	հատ	%	աշնանը	գարնանը	հատ	%
1.	Ստուգիչ (առանց պարարտացման)	605	474	131	21.7	605	510	95	15.7	589	489	100	17
2.	N ₆₀ P ₆₀ K ₆₀	606	512	94	15.5	607	536	71	11.7	601	535	66	11
3.	Կենսահումուս 3.5 տ/հա	596	507	89	14.9	599	532	67	11.2	599	534	65	10.9
4.	N ₆₀ P ₆₀ K ₆₀ + բենտոնիտ 3տ/հա (աշնանը)	600	530	70	11.7	603	553	50	8.3	602	554	48	8
5.	Կենսահումուս 3.5 տ/հա + բենտոնիտ 3տ/հա (աշնանը),	603	537	66	10.9	605	560	45	7.4	608	565	43	7
6.	N ₆₀ P ₆₀ K ₆₀ + բենտոնիտ 3տ/հա (գարնանը)	600	501	99	16.5	604	531	73	12.1	612	543	69	11.2
7.	Կենսահումուս 3.5 տ/հա + բենտոնիտ 3տ/հա (գարնանը)	609	513	96	15.8	607	535	72	11.9	597	531	66	11

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐԱՆԻ ԱՌԱՋ ԿԱՆՈՒՄԱՆ

Նմուշային խրճերի մեխանիկական անալիզներից պարզվել է, որ հողի մշակման տարբեր եղանակներում հանքային և օրգանական պարարտանյութերի համարժեք չափաքանակներն ու նրանց ֆոնի վրա բենտոնիտի տարբեր ժամկետների կիրառությունը որոշակի ազդեցություն են ունեցել աշնանացան ցորենի բույսերի բարձրության և կառուցվածքային տարրերի վրա:

Հողի մշակման երեք եղանակներից առավել դրական արդյունքներ է ապահովել միայն փխրեցման (10-12 սմ) եղանակը, որի դեպքում անվար և սովորական վարի համեմատությամբ էականորեն ավելացել են բույսերի բարձրությունը և բերքի կառուցվածքային տարրերի քանակությունները (աղ. 2): Աղյուսակի տվյալներից երևում է, որ եթե անվար եղանակի դեպքում բույսերի բարձրությունը կազմել է 92 սմ (± 2 սմ), սովորական վարի դեպքում՝ 93 սմ ($\pm 1,2$ սմ), ապա միայն փխրեցման եղանակով մշակված աշնանացան ցորենի բույսերի բարձրությունը կազմել է 96 սմ ($\pm 0,8$ սմ):

Համեմատման դրական տարբերություններ են նկատվել նաև բերքի կառուցվածքային տարրերի ցուցանիշներում, որտեղ միայն փխրեցման եղանակով մշակված աշնանացան ցորենի հասկերը երկարությամբ, հատիկների քանակով, 1000 հատիկի կշռով, հատիկի ու ծղոտի բերքով, միջին հաշվով շուրջ 7,1-14,6 %-ով բարձր արդյունքներ են ապահովել, քան անվար և սովորական վարի համեմատման ցուցանիշները, որոնք և հիմնավորված են նշված եղանակներով մշակված աշնանացան ցորենի հատիկի և ծղոտի բերքի քանակներով, որտեղ փխրեցման եղանակով մշակված աշնանացան ցորենի հատիկի բերքը կազմում է 23,6 գ/հա, ծղոտինը՝ 45 գ/հա, մինչդեռ անվարի և սովորական վարի եղանակներում համապատասխանաբար՝ 20,6 գ/հա, 40,4 գ/հա և 20,2 գ/հա և 42,8 գ/հա:

Հողի մշակման տարբեր եղանակների ազդեցությամբ նման տարբերությունը բացատրվում է նրանով, որ ծանր տեխնիկայի միջոցով հողի տևական մշակության պրոցեսում հողերի ամրացումն առաջ է բերում ջրաթափանցելիության թուլացում, իսկ անվարի դեպքում, նաև սերմերի ոչ նորմալ խորությունում գտնվելու պատճառով, բույսերի արմատներն անհամաչափ են տեղաբաշխվում հողի պրոֆիլում կամ ընդհանրապես խորը չեն տարածվում, հետևաբար՝ սովորական վարի և անվարի ժամանակ բույսերի արմատային համակարգի համար անբարելավ միջավայրի առաջացման պատճառով աշնանացանի բույսերը միայն փխրեցմամբ մշակման համեմատ առավել նվազ աճ ու զարգացում են ապահովել և արդյունքում առավել պակաս հատիկի և ծղոտի բերքի քանակություն:

Դաշտային փորձերի արդյունքներով միևնույն ժամանակ բացահայտվել է, որ հողի մշակման բոլոր երեք եղանակներում աճեցված աշնանացան ցորենի ցանքերում հանքային պարարտանյութերի և կենսահումուսի համարժեք չափաքանակները մշակման եղանակների շրջանակներում գրեթե հավասար ազդեցություն են ունեցել աշնանացան ցորենի աճի, զարգացման, բերքի քանակի և կառուցվածքային տարրերի ավելացման վրա (աղյուսակ 2,3): Մինչդեռ, երբ նրանց ֆոնի վրա տարբեր ժամկետներում կիրառվել է բենտոնիտի 3 տ/հա նորման (աշնանը և գարնանը), այդ տարբերակներում ստացվել են միանգամայն այլ արդյունքներ: Այսպես, եթե հանքային պարարտանյութերի և կենսահումուսի համարժեք չափաքանակների կիրառման տարբերակներում անվար մշակման եղանակի դեպքում հասկի երկարությունը կազմել է 5,6-ական սմ, 1000 հատիկի կշիռը՝ 43,7 և 45,2 գրամ, հատիկի բերքը՝ 33 և 32,5 գ/հա, սովորական վարի դեպքում այդ ցուցանիշները եղել են համապատասխանաբար՝ 6,2 և 6,4 սմ, 41,4 և 43,6 գրամ և հատիկի բերքը՝ 30,4 և 30,6 գ/հա, ապա այդ նույն ֆոնների վրա, երբ աշնանը հող է մտցվել 3տ/հա բենտոնիտ, անվար եղանակով աճեցված աշնանացան ցորենի հասկի երկարությունը ֆոնների համեմատ ավելացել է 0,7-1 սմ-ով և կազմել 6,3 և 6,6 սմ, 1000 հատիկի կշիռը կազմել է 48,9-49,6 գրամ, բերքը՝ 40,8-44, գ/հա կամ ֆոնների համեմատ բերքի հավելումը հանքային պարարտանյութերի դեպքում կազմել է 12 գ/հա, կենսահումուսի ֆոնի համեմատ՝ 14,6 գ/հա:

Աղյուսակ 2. Հողի մշակման տարբեր եղանակների, հանքային պարարտանյութերի և կենսահումուսի համարժեք չափաբանակների և դրանց ֆոնի վրա բենտոնիտի կիրառման ժամկետների ազդեցությունը աշնանացան ցորենի աճի, զարգացման և բերքի կառուցվածքային տարրերի վրա

N	Տարբերակները	Անվար						Միայն փխրեցում (10-12 սմ)						Սովորական վար (22-25 սմ)					
		հատիկի բերքը ըստ կրկնողությունների կգ/50մ ²			հատիկի միջին բերքը			հատիկի բերքի հավելումը			հատիկի բերքը ըստ կրկնողությունների կգ/50մ ²			հատիկի բերքը ըստ կրկնողությունների կգ/50մ ²			հատիկի միջին բերքը		
		1	2	3	գ/հա	գ/հա	%	1	2	3	գ/հա	գ/հա	%	1	2	3	գ/հա	գ/հա	%
1	Ստուգիչ (առանց պարարտացման)	9.7	10.8	10.4	20.6	-	-	11.8	12.0	12.0	23.6	-	-	9.8	9.9	10.6	20.2	-	-
2	N ₆₀ P ₆₀ K ₆₀	13.8	14.4	15.0	28.8	8.2	39.8	17.0	17.0	15.5	33.0	9.4	39.8	14.0	14.6	13.8	28.2	8.0	39.6
3	Կենսահումուս 3.5 տ/հա	15.0	14.8	15.5	30.2	9.6	46.6	16.5	16.3	16.0	32.5	8.9	37.7	14.8	14.0	14.1	28.6	8.4	43.6
4	N ₆₀ P ₆₀ K ₆₀ + բենտոնիտ 3տ/հա (աշնանը)	21.6	20.0	19.6	40.8	20.2	98.1	26.3	25.0	25.6	51.3	27.7	117.4	20.7	21.7	22.7	43.4	23.2	114.9
5	Կենսահումուս 3.5 տ/հա + բենտոնիտ 3տ/հա (աշնանը),	21.8	22.4	23.0	44.8	24.2	117.5	27.5	27.0	28.8	54.9	31.3	132.6	21.9	23.3	22.6	45.2	25.0	123.8
6	N ₆₀ P ₆₀ K ₆₀ + բենտոնիտ 3տ/հա (գարուն)	14.9	15.3	14.5	29.8	9.2	44.7	19.3	18.6	20.0	38.6	15.0	63.6	15.5	16.0	16.8	32.2	12.0	59.4
7	Կենսահումուս 3.5 տ/հա + բենտոնիտ 3տ/հա (գարունը)	15.8	16.0	16.0 5	31.9	11.3	54.9	19.6	19.1	18.3	38.0	14.4	61.0	15.9	15.8	15.4	31.4	11.2	55.5

Աղյուսակ 3. Հողի մշակման տարբեր եղանակների, հանքային պարարտանյութերի և կենսահումուսի համաթեք չափաբանակների և դրանց ֆոսֆորի վրա բենտոնիտի կիրառման ժամկետների ազդեցությունը աշնանացան ցորենի բերքի վրա ըստ կրկնողությունների

Տարբերակները	Անվար							Միայն փխրեցում (10-12 սմ)							Մովորական վար (22-25 սմ)							
	հասկակիր ցողուններ		սմ	հասկակիր բուսերի բարձրությունը, սմ	սմ	1000 հատիկի կշիռը, գ	հատիկի միջին բերքը, գ/հա	հասկակիր ցողուններ		սմ	սմ	սմ	1000 հատիկի կշիռը, գ	հատիկի միջին բերքը, գ/հա	հասկակիր ցողուններ		սմ	սմ	սմ	1000 հատիկի կշիռը, գ	հատիկի միջին բերքը, գ/հա	սմ
	թիվը, հատ/մ²	բուսերի բարձրությունը, սմ						թիվը, հատ/մ²	բուսերի բարձրությունը, սմ						թիվը, հատ/մ²	բուսերի բարձրությունը, սմ						
Մտուցիչ (առանց պարարտացման)	425 ± 4	92 ± 2	5	0.45 ± 0.4	39	20.6	40.4 ± 1.5	457 ± 2.1	96 ± 0.8	5.6	0.55 ± 0.5	40.2	23.6	45 ± 2	430 ± 3	93 ± 1.2	5.3	0.5 ± 0.2	39.3	20.2	42.8 ± 1.5	
N60P60K60	490 ± 3.5	99.2 ± 2	5.6	0.55 ± 0.2	42.9	28.8	56.3	512 ± 3.5	100 ± 2.1	6.4	0.62 ± 0.4	43.7	33	63 ± 2.3	491 ± 1.5	94.2 ± 0.8	6.2	0.56 ± 0.3	41.4	30.4	59 ± 1.2	
Կենսահումուս 3.5 տ/հա	500 ± 3	99 ± 3	5.6	0.56 ± 0.2	43.8	30.2	59.3 ± 2	509 ± 2.5	107.4 ± 1.5	6.4	0.64 ± 0.2	45.2	32.5	65 ± 3	499 ± 2	101 ± 1.3	6.4	0.56 ± 0.2	43.6	30.6	62 ± 2	
N60P60K60 + բենտոնիտ 3տ/հա (աշնանը)	514 ± 4	100.1 ± 3	6.3	0.65 ± 0.3	48.9	40.8	73.4 ± 2.5	545 ± 2	108.2 ± 2	7.8	0.75 ± 0.3	49.8	51.3	98 ± 3	521 ± 1.6	104 ± 1.2	7	0.69 ± 0.3	49.8	45.4	90.1 ± 1.5	
Կենսահումուս 3.5 տ/հա + բենտոնիտ 3տ/հա (աշնանը),	521 ± 3	108 ± 2.1	6.6	0.68 ± 0.4	49.6	44.8	75.8 ± 1.6	557 ± 3	107.4 ± 1.5	7.9	0.79 ± 0.1	52.1	54.9	102 ± 3.5	527 ± 3.1	105 ± 0.9	7.2	0.71 ± 0.3	51.4	47.6	97.1 ± 3	
N60P60K60 + բենտոնիտ 3տ/հա (գարնանը)	493 ± 2	101 ± 2	5.8	0.56 ± 0.3	43.2	29.8	57.1 ± 2	515 ± 3.1	102.1 ± 1.5	6.8	0.67 ± 0.2	44.9	38.6	63.4 ± 1.5	499 ± 2.1	101 ± 1	6.3	0.6 ± 0.1	43.9	34.3	61.4 ± 2	
Կենսահումուս 3.5 տ/հա + բենտոնիտ 3տ/հա (գարնանը)	499 ± 5	103.4 ± 3	5.9	0.57 ± 0.1	44.2	31.9	59.3 ± 1.3	514 ± 3.6	104 ± 1.7	6.9	0.69 ± 0.3	46.1	38	68.4 ± 2	515 ± 2.3	101.9 ± 1.5	6.4	0.62 ± 0.3	44.6	33.1	65.8 ± 0.9	

Նշված պարարտանյութերի ֆոների վրա բենտոնիտի՝ աշնանը կիրառված տարբերակներում համանման փոփոխություններ են նկատվել նաև հողի մշակման միայն փխրեցման և ավանդական եղանակների դեպքերում, սակայն աշնանացանի ցանքերում այդ դրական փոփոխություններն առավել ակնհայտ են եղել հողի մշակման փխրեցման եղանակի դեպքում, որտեղ մյուս եղանակների համեմատությամբ արձանագրվել է հատիկի և ծղոտի ամենաբարձր բերքատվությունը:

Ինչպես ցույց են տալիս աղ. 3-ում բերված տվյալները, հանքային պարարտանյութերի ֆոնի վրա բենտոնիտի՝ աշնանը կիրառված տարբերակներում, եթե միայն հողի փխրեցման եղանակի դեպքում ֆոնի համեմատ աշնանացան ցորենի հատիկի բերքի հավելումը կազմել է 18.3 g/հա, ապա անվար եղանակի դեպքում այդ հավելումը կազմել է 12 g/հա, իսկ սովորական վարի դեպքում՝ 15 g/հա: Նման օրինաչափություն նկատվել է նաև կենսահումուսի ֆոնի վրա բենտոնիտի՝ աշնանը կիրառված տարբերակներում, որտեղ հատիկի և ծղոտի ամենաբարձր բերք ստացվել է հողի միայն փխրեցման եղանակի դեպքում (54.9 g/հա), մինչդեռ անվար եղանակի և ավանդական վարի պայմաններում աճեցված աշնանացան ցորենի հատիկի և ծղոտի բերքատվությունը կազմել է համապատասխանաբար՝ 44.8 g/հա (հատիկ), 75.8 g/հա (ծղոտ) և 47.6 g/հա (հատիկ), 97.1 g/հա (ծղոտ):

Դաշտային փորձերի արդյունքներով հիմնավորվել է, որ հողի մշակման բոլոր եղանակների դեպքում հանքային պարարտանյութերի և կենսահումուսի ֆոների վրա բենտոնիտի 3 տ/հա նորման, երբ կիրառվել է զարնանը, չնայած ինչպես հողի մշակման համապատասխան եղանակի ստուգիչի և ֆոնի համեմատությամբ արձանագրվել է հատիկի և ծղոտի բերքի հավելում, սակայն այդ հավելումները և ընդհանրապես բերքատվության ցուցանիշները բենտոնիտի՝ աշնան կիրառման համանման տարբերակների ցուցանիշներից 45-51.3 %-ով պակաս են ստացվել:

Բենտոնիտը, լինելով բնական մաքուր հանքատեսակ, շնորհիվ իր կառուցվածքային շերտերի, բաղադրության և կլանողական հատկության, անջրդի երկրագործության պայմաններում հողից կլանում ու պահում է ավելցուկային խոնավությունը և վեգետացիայի ընթացքում այդ խոնավությունը փոխանցում է հողային միջավայր: Միևնույն ժամանակ լինելով կալիումով բավականին հարուստ՝ հողը հարստացնում է այդ տարրով, նպաստավոր պայմաններ է ստեղծում բույսերի նորմալ աճի ու զարգացման համար և արդյունքում էականորեն ազդում է աշնանացանների ձմեռադիմացկունության բարձրացման և բերքատվության ավելացման վրա:

Այսպիսով, Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի սևահողային գոտու անջրդի երկրագործության վարման պայմաններում մշակվող աշնանացան ցորենից բարձր ու կայուն բերք ապահովելու համար հողի մշակումն իրականացնել միայն փխրեցման եղանակով՝ հողը փխրեցնելով 10-12 սմ խորությամբ, որը սովորական վարի (22-25 սմ) և անվարի (0-ակն) համեմատությամբ նպաստում է հողի հատկությունների բարելավմանը և բերրիության բարձրացմանը:

Հողի սկավառակային (միայն փխրեցմամբ) մշակման դեպքում աշնանացան ցորենի պարարտացման աշխատանքները կազմակերպելիս անհրաժեշտ է կամ հանքային պարարտանյութերի, կամ կենսահումուսի համարժեք չափաքանակների ֆոնի վրա աշնանը հող մտցնել բնական հանքային հումքատեսակով բենտոնիտ (3 տ/հա), որի արդյունքում բարձրանում է բույսերի ձմեռադիմացկունությունը, առաջանում բարելավ միջավայր նորմալ աճի ու զարգացման համար, և ստացվում է 51.3-54.9 g/հա հատիկի և 98-102 g/հա ծղոտի բերք:

Հողի մշակման և պարարտացման հիշյալ տեխնոլոգիաների կիրառումը կնպաստի տարածաշրջանի բնակչության պարենային անվտանգության ապահովմանը, սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը և ռեսուրսախնա ու բնությունամետ երկրագործության զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գալստյան Մ.Յ. Աշխատանքային և կարտոֆիլի պարարտացման արդյունավետությունը Սևանի ավազանի պայմաններում. Երևան, Լիմուշ, 156 էջ, 2007:
2. Գալստյան Մ.Յ. Գյուղատնտեսության էկոլոգիացման առանձնահատկությունները (ուսումնական ձեռնարկ). Երևան, ՀԱՍՏ, 237 էջ, 2016:
3. Դավթյան Գ. Ս., Բաբայան Գ. Բ. Հայկական ՍՍՌ-ի հողածածկի ագրոքիմիական բնութագիրը. Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 131 էջ, 1966:
4. Հայկազյան Վ. Յ. Նոր երկրագործության փիլիսոփայություն - Զրեատոմատիա, 422 էջ, 2019:
5. Հայրապետյան Է.Ս., Շիրինյան Ա.Վ. Դասագիրք, ՀԳԱ ուսանողների համար, Երևան, թվական, 408 էջ, 2003:
6. Երևան,
7. Ղարախանյան Կ.Ա., Մկրտչյան Ա.Լ., Մարկոսյան Մ.Ս., Գալստյան Ս.Ս., Գալստյան Մ.Յ. Պարենային անվտանգության ապահովման համատեքստում աշխատանքային և կարտոֆիլի բերքատվության բարձրացման ուղղված ագրոտեխնիկական տարբեր տեխնոլոգիաների տնտեսա-էկոլոգիական արդյունավետության գնահատումը. Հայաստանի կենսաբան. հանդես, 73, 1, 43-49 էջ, 2021:
8. Մելքոնյան Կ.Գ., Ղազարյան Յ.Ղ., Մանուկյան Ռ.Ռ. Գյուղատնտեսական նշանակության հողերի էկոլոգիական արդի վիճակը, հողօգտագործման մակարդակը, կառավարման համակարգի կատարելագործումը և արդյունավետության բարձրացման ուղիները. Հայաստանի Հանրապետությունում. Երևան, Հողագիտ. ագրոքիմ. և մելիորաց. գիտ. կենտ., 54 էջ, 2004:
9. Баюц Ю.О. Влияние минеральных удобрений на зимостойкость озимой пшеницы на выщелоченных черноземах Ширакской зоны// Труды НИИ почвоведения и агрохимии МСХ Арм ССР, вып. 9, с. 185-193, 1974.
10. Галстян М.А. Вермикультура - элемент биоорганического земледелия // Мат. Международного симпозиума "Нетрадиционное растениеводство, энтомология, экология и здоровье", второй съезд селекционеров, Симферополь, с. 607-608, 2005.
11. Дмитриев С.С., Карасева Л.А. Особенности применения мочевины как азотного удобрения в высоких дозах на кислых дерново-подзолистых почвах // Труды Ленинградского с/х института. вып. 338, с. 3-21, 1978.
12. Доспехов Б.А. Методика полевого опыта, М. "Колос", 336 с. 1973.
13. Максимова Ольга "Функциональные минералы" The Chemical Journal. Мировой рынок, на русск. языке, с. 20-25, 2017.
14. Минеев В. Г. Агрохимия М. "Колос", 719 с., 2004.
15. Минеев В.Г. Биологическое земледелие (под руководством Е. Н. Мишустина) М., Наука, 116 с., 1980.
16. Руденко А.И. Определение фаз развития сельскохозяйственных растений. М., Моск. Общ. Испыт. Природы, 150 с., 1950.
17. Сисакян Н.М. "Биохимическая характеристика засухоустойчивости растений". М.-Л: Изд. АН СССР, 145 с., 1940.
18. Ягодин Б.А., Смирнов П.М., Петербургский А.В., Кудин В.В., Слитчик А.В., Кузюкин А.Н., Саблин С.М. Агрохимия (под ред. Б.А. Ягодина), 2-е изд, М. Агропромиздат, 639 с., 1989.
19. Schafnit E, Wilhelm A. Kühlversuche mit verschiedenen Ernährung Pflanzen and Untersuchungen über deren Stoffwechselphysiologell Pytopar•Z•1993.Bd6.H6.

Ստացվել է 31.08.2022



Հայաստանի կենսաբ. հանդես, 4 (74), 2022

DOI:10.54503/0366-5119-2022.74.4-39

**PHILADELPHUS ՑԵՂԻ (HYDRANGEACEAE) ՆԵՐՍՈՒԾՎԱԾ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԶՅ ԲՈՒՄԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ ԵՎ
ԻՋԵՎԱՆԻ ԴԵՆԴՐՈՊԱՐԿՈՒՄ**

Ա.Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԶՅ ԳԱԱ Ա.Ա. Թախտաշյանի անվան բուսաբանության ինստիտուտ,
ինտրոդուցիայի բաժին
annagrigr-an22@mail.ru

Ծշտվել է ԶՅ բուսաբանական այգիներում և Իջևանի դենդրոպարկում ներմուծված Hydrangeaceae ընտանիքի *Philadelphus* ցեղին պատկանող 10 տեսակների, 3 հիբրիդների, 1 պարտիզային ձևի տաքսոնոմիական պատկանելությունը: Ուսումնասիրվել են դրանց մորֆոլոգիական հատկանիշները, տրվել է ցեղի և որոշված տաքսոնների բուսաբանական նկարագիրը:

Սրնգենի – ներմուծում – հավաքածու – տաքսոնոմիական պատկանելություն

Уточнена таксономическая принадлежность 10 видов, 3 гибридов, 1 садовой формы, принадлежащих к роду *Philadelphus* семейства Гортензиевые, интродуцированных в ботанических садах и Иджеванском дендропарке Армении. Изучены их морфологические признаки, дана ботаническая характеристика выделенных таксонов рода.

Շուբուշնիկ – интродукция – коллекция – таксономическая принадлежность

The taxonomic affiliation of 10 species, 3 hybrids, 1 garden form, belonging to the genus *Philadelphus* of the Hydrangeaceae family introduced in the Armenian Botanical Gardens and arboretum Ijevan, have been clarified. Their morphological characters are studied; the botanical characteristics of the selected taxa of the genus are given.

Mock-Orange – introduction – collection – taxonomic affiliation

Գիտական որոշակի հետաքրքրությամբ և ինքնատիպ գեղազարդությամբ է օժտված *Philadelphus* ցեղը: Այն ունի աշխարհագրական տարածվածության բավական ընդարձակ արեալ և հարուստ տաքսոնոմիական կազմ: Ցեղի բարձր գեղազարդ ներկայացուցիչների բացակայությունը կանաչ տնկարկների դենդրոկազմից ստիպեց մեզ մտածել, որ դրանց ներմուծումը, բազմակողմանի ուսումնասիրությունը, ցուցադրական հավաքածուների ստեղծումն ու կանաչապատման պրակտիկայում լայն կիրառությունն ունեն չափազանց մեծ գիտական նշանակություն և գործնական կարևորություն: Այդ հանգամանքներից ելնելով՝ մեր կողմից անհրաժեշտություն առաջացավ կատարել գիտական գույքագրում և ճշտել ԶՅ բուսաբանական այգիներում և Իջևանի դենդրոպարկում աճող, կլիմայավարժեցման գործընթացի տարբեր փուլերում գտնվող *Philadelphus* ցեղի ներկայացուցիչների տաքսոնոմիական պատկանելությունը:

Տաքսոնոմիայի բնագավառում պատմական հաջորդականությամբ տարբեր հեղինակների առաջարկած ֆիլոգենետիկ համակարգերում *Philadelphus* L. ցեղը, ըստ տաքսոնոմիստների մեծ մասի, պատկանում է Saxifragaceae ընտանիքին, իսկ այժմ այն գտնվում է Hydrangeaceae ընտանիքում, և կարծիքները հակասական են եղել այս ընտանիքների տաքսոնոմիական կապերի և ծավալի վերաբերյալ [5-7, 15, 19]:

XX դարում առաջարկված ֆիլոգենետիկ համակարգերում *Philadelphus* ցեղը ներկայացված է եղել տեսակների տարբեր քանակությամբ և գտնվել է Քարբեկազգիների (Saxifragaceae) ընտանիքի կազմում: Ա.Ի. Պոյարկովան ներկայացրել է *Philadelphus* ցեղին պատկանող 4 տեսակներ, Ա. Ռեհդերը՝ 36, Ն.Վ. Շիպչինսկին՝ 32, Ա.Ա. Դմիտրիևան՝ 18 տեսակներ [6, 7, 15, 19]:

Saxifragaceae Juss. ընտանիքը բազմիցս ուսումնասիրությունների օբյեկտ է հանդիսացել մորֆոլոգիայի, ցիտոլոգիայի, կարիոլոգիայի, բիոքիմիայի և պալինոլոգիայի բնագավառում: Հետազոտողների ցանկությունն է եղել, նոր մոտեցումներ ցուցաբերելով, կատարելագործել ընտանիքի կարգաբանական դասակարգումը: Բայց չնայած այդ հետազոտությունների բնագավառում հասած որոշակի առաջընթացին և ընտանիքի ծագումնաբանության ու ազգակցական կապերի վերլուծության արդյունքներին՝ այս խումբը դեռևս համարվում է բավականին քիչ ուսումնասիրված: Ապացուցված կարելի է համարել միայն Saxifragaceae Juss. և Hydrangeaceae Dumort. ընտանիքների միջև սերտ ազգակցական կապերի բացակայությունը [8, 10]:

Առաջին անգամ Hydrangeaceae ընտանիքի ինքնուրույնության մասին նշել է Տ.Ի. Չախկոնսկիովան՝ ասելով, որ պատկանելությունը Saxifragaceae ընտանիքին հնացած է, և որ այն պետք է սերտորեն կապել Escalloniaceae Dumort. ընտանիքին: Երբեմն *Philadelphus* և նրան մոտ գտնվող ցեղերն առանձնացվել են հատուկ Philadelphaceae Martinov ընտանիքում [8]:

Philadelphus ցեղը Hydrangeaceae ընտանիքի 19 ցեղերի և 260 տեսակների կազմում ներառել է Ա. Լ. Թախտաջյանը [10]՝ բացառելով *Dichroa* Lour. և *Broussaisia* Gaud. ցեղերը այդ ընտանիքից և հայտնաբերելով նրանց նմանությունը Caprifoliaceae Juss. ընտանիքի ներկայացուցիչներին: Նա կարծում էր, որ Գ. Խաչինսոնի առաջարկությունը բաժանել այս ընտանիքը Philadelphaceae և Hydrangeaceae ընտանիքների ոչ մի հիմնավորում չի գտել, ոչ էլ լեզոմորֆ հատկանիշներով, ոչ էլ սաղմնաբանական և պալինոլոգիական ուսումնասիրությունների արդյունքում [9, 10]: Այսպիսով, նրա կողմից առաջարկված ֆիլոգենետիկ համակարգում Hydrangeaceae (incl. Kirengeshomaceae Nakai 1943, Philadelphaceae D. Don 1826) ընտանիքը, որը մոտ էր Escalloniaceae ընտանիքին, ներկայացված էր 17 ցեղերով (ներառյալ *Philadelphus*-ը) և 250 տեսակներով, որոնք հանդիպում էին հյուսիսային կիսագնդի բարեխառն և մերձարևադարձային շրջաններում, առավելապես Արևելյան Ասիայում (հիմնականում Չինաստանում) և Հյուսիսային Ամերիկայում, քիչ քանակությամբ Հարավարևելյան Ասիայում և Անդերում՝ Մեքսիկայից մինչև Չիլիի հարավ [11]:

Այս ուսումնասիրություններում հետևել ենք Hydrangeaceae ընտանիքի *Philadelphus* ցեղի APG IV դասակարգմանը [17], որը ծաղկավոր բույսերի ժամանակակից տաքսոնոմիկ դասակարգման համակարգ է և մշակվել է ծածկասերմերի ֆիլոգենետիկայով զբաղվող խմբի անդամների կողմից (James W. Byng, Mark W. Chase, Maarten J.M. Christenhusz, Michael F. Fay, Walter S. Judd, David J. Mabberley, Alexander N. Sennikov, Douglas E. Soltis, Pamela S. Soltis, Peter F. Stevens): Այն APG III դասակարգման համակարգի իրավահաջորդն է, որտեղ ևս *Philadelphus* ցեղն առանձնացված է Hydrangeaceae ընտանիքում [16, 17]:

Philadelphus ցեղին պատկանող տեսակների արտաքին մորֆոլոգիական հատկանիշների մասին հիմնական տեղեկությունները տրված են Հու-ի աշխատանքներում: Նա ցեղը բաժանել է 4 ենթացեղերի և 9 սեկցիաների՝ ելնելով բողբոջների դասավորության ձևից, սպիների ձևից, բաժակաթերթերի ձևից ու դիրքից, սերմերի բնույթից:

Ըստ նրա՝ *Gemmatus* ենթացեղին են պատկանում *Poecilostigma*, *Coulterianus* սեկցիաները, *Euphiladelphus* ենթացեղին՝ *Pauciflorus*, *Stenostigma*, *Microphyllus* սեկցիաները, *Macrothyrsus* ենթացեղին՝ *Californicus*, սեկցիաները, *Deutzioides*-ին *Hirsutus*, *Pseudoserpyllifolius*, *Serpyllifolius* սեկցիաները [18]:

Ճաղկի ընդհանուր մորֆոլոգիան բավական մանրամասն նկարագրված է նաև այլ հեղինակների կողմից (Payer, 1657; Gelias, 1967; Lein-feUner, 1950; Mort, Slopier, 1971):

Գ.Լ.Ստիբբենսը Hydrangeaceae ընտանիքի Էկոֆիլետիկ գծապատկերներում նշել է *Philadelphus* ցեղը բնութագրող 4 սպեցիֆիկ հատկանիշներ՝ տերևաթափություն, բառանդամ ծաղկապատ, վարսանդի ստորին լայնացած սերմնարան ու միանուկված ստիլոիդներ [20]: Որոշ հեղինակներ ևս տվել են ցեղը բնութագրող որոշիչ նշանների բանալի: Ըստ Ա. Լոզինա-Լոզինսկայայի՝ տերևները հակադիր կամ հերթադիր դասավորությամբ են, բոլոր ծաղիկները՝ պտղաբեր, հուրանավոր կամ խոզանակաձև ծաղկաբույլներում, ծաղիկները՝ բառանդամ կամ հնգանդամ, առեջները շատ են, տերևները՝ ատամնաեզր [7]: Ըստ Վ. Միրզաշվիլու՝ տերևները հակադիր, հերթադիր դասավորությամբ են, ծաղիկները պտղաբեր են ու մանր հավաքված ծաղկաբույլի կենտրոնական մասում, կամ կեղծ են ու խոշոր դասավորված ծաղկաբույլի եզրերով, առեջները շատ են, կամ 8-15, միայն *Philadelphus fendleri* Engel et Grey. տեսակի մոտ մինչև 8-ն են [6]:

Ըստ Ա.Բ. Պոյարկովայի՝ սրնգենու լատիներեն անվանումն առաջացել է հունարեն *philos*-փրել և *adelphos*-եղբայր բառերից, որը ցույց է տալիս ցեղի տեսակների միջև գտնվող սերտ կապն ու նմանությունը, որում մենք ևս համոզվեցինք, իսկ *Ph. coronarius* L. անվանումը Վ. Լիննեյը գործածել է շատ հաճախ տարբեր տեսակներին պատկանող անհայտ ծագմամբ և մշակության մեջ հանդիպող նմուշների համար [6, 7, 15]:

Նյութ և մեթոդ: Հետազոտության նյութ են հանդիսացել 33 բուսաբանական այգիների և Իջևանի ղենդրոպարկի *Philadelphus* ցեղին պատկանող տեսակների կենդանի և Երևանի բուսաբանության ինստիտուտի հերբարիումային (ERE) հավաքածուները: Ըստ ՀՍՍՀ բուսաբանական այգիների և ղենդրոպարկերի ծառերի և թփերի անոտացված ցուցակում ամփոփված գույքագրման արդյունքների տվյալների, որում նշված է, որ 33 բուսաբանական այգիներում և ղենդրոպարկերում բազմիցս ներմուծվել և կլիմայավարժեցվել են *Philadelphus* ցեղին պատկանող մոտ 40 տաքսոններ, անհրաժեշտություն է առաջացել պարզել և ճշտել ղենդրոպարկերում պահպանված սրնգենու տեսակների, հիբրիդների և պարտիզային ձևերի ընդհանուր կազմն ու որոշել դրանց սիստեմատիկական և տաքսոնոմիական պատկանելությունը: Ընդ որում Երևանի բուսաբանական այգում ներմուծվել և կլիմայավարժեցվել են 31, Վանաձորի բուսաբանական այգում՝ 19, Սևանի բուսաբանական այգում՝ 10, Իջևանի ղենդրոպարկում՝ 3 տաքսոններ, և այժմ դրանց մեծ մասը, տարբեր պատճառներով չի պահպանվել հավաքածուների կազմում [3, 4]:

Դաշտային դիտարկումներն ու բույսերի հավաքն իրականացվել է 2020-2022 թվականներին: Հերբարիումները կազմվել են ըստ Արարատյանի մեթոդաբանության [1]: Կիրառվել են հիմնականում համեմատական, համեմատական-մորֆոլոգիական և կարգաբանական մեթոդները: Հայտնաբերված բույսերի առանձնյակները համարակալվել են, և վեգետացիայի տարբեր փուլերում (ծաղկում, պտղակալում, սերմակալում) նմուշները վերցվել են նույն բույսերից: Դաշտային դիտումները ցույց են տվել, որ այդպիսի դժվար տարբերվող տեսակներ ունեցող ցեղի, ինչպիսին սրնգենին է, որոշ հիմնական հատկանիշներ փոխված են բույսերի չորության և անհրաժեշտ խնամքի պակասի հետևանքով: Ուստի համեմատության մեջ են դրվել նաև նախկինում հավաքված հերբարիումային նմուշները (ERE - № 22077, № 25378, № 56724, № 47577, № 47576, № 68284, № 27267, № 13285) թարմ բուսանմուշների հետ: Սակայն հիմնական որոշիչները կենդանի բույսերն են:

Տեսակների որոշման համար օգտագործվել են «Флора СССР», «Деревья и кустарники СССР», «Дендрофлора Кавказа», «Дикорастущие деревья и кустарники Дальнего Востока», «Атлас по описательной морфологии высших растений» որոշիչներն ու ատլասները [5-7, 12-15]: Բուսաբանական տերմինները ճշտվել են ըստ տերմինների համառոտ բառարանի [2]: Մորֆոլոգիական հետազոտությունների համար օգտագործվել է МБС-1 ստերեոսկոպիկ միկրոսկոպը: Տեսակների բնական տարածվածությունը ճշտվել է ըստ Ս.Յ. Սոկոլովի [7] և վերոհիշյալ աշխատությունների:

Ստորև բերվում է ընդհանուր ցեղի որոշված տեսակների բուսաբանական նկարագիրը:

***Philadelphus caucasicus* Koehne in Gartenfl., Սրնգենի կովկասյան:** Կովկասյան սրնգենին հաջողությամբ աճում է Երևանի, Սևանի բուսաբանական այգիներում և Իջևանի ղենդրոպարկում: Թփերի բարձրությունը հասնում է 3-5 մ-ի, ծաղկում են հունիսի առաջին տասնօրյակում, բացառությամբ Սևանի բուսաբանական այգու, որտեղ ծաղկման շրջանը հունիսի երկրորդ, նույնիսկ երրորդ տասնօրյակն է: Պտղաբերում և սերմակալում են առատ: Սաղարթը փնջաձև է, ծաղիկները սպիտակադեղնավուն են, ուժեղ անուշ բույրով, 7-11-ական, հավաքված ողկուզանման ծաղկաբույլ-:

լերում: Պտղաբերում է օգոստոսին, Սևանի բուսաբանական այգում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին: Հայաստանում բնականորեն աճող սրնգենու միակ տեսակն է, որը տարածված է հյուսիսարևելյան անտառային շրջաններում՝ Տավուշի մարզի, Իջևանի ֆլորիստիկ շրջանի կաղնեբոխային անտառներում՝ ծովի մակերևույթից մինչև 1800 մ բարձրությունների վրա:

***Philadelphus coronarius* L., Սրնգենի պսակավոր:** Երևանի բուսաբանական այգու և Իջևանի դենդրոպարկի պայմաններում ծաղկում և պտղաբերում է: Թփերի բարձրությունը 1-3 մ է: Ճաղիկները սպիտակադեղնավուն են, խիստ բուրումնավետ, 3-4 սմ տրամագծով, ձվաձև ծաղկաթերթիկներով 4-6 ողկուզանման ծաղկաբույլերում, ծաղկակիրը և բաժակաթերթերը մերկ կամ թույլ թավոտ են: Ամենավաղ ծաղկող տեսակներից է: Ծաղկում է հունիսի սկզբին, պտղաբերում օգոստոս ամսին: Բնականորեն տարածված է Հարավարևմտյան Եվրոպայում:

***Philadelphus coronarius* L. f. *Pl. hort.*, Սրնգենի լիաթերթ:** 1,5մ բարձրությամբ թուփ է: Երևանի բուսաբանական այգու պայմաններում ծաղկում է հունիսի առաջին տասնօրյակում, պտղաբերում է առատ, սերմակալում է ոչ առատ: Ծաղիկը՝ սպիտակ, խոշոր, անուշաբույր: Ծաղկում է հունիսի սկզբին, պտղաբերում սեպտեմբերին:

***Philadelphus gordonianus* Lindl., Սրնգենի Գորդոնի:** Բուսության մեջ սրնգենու ամենաբարձրահասակ տեսակներից է (3-6 մ), որի բարձրությունը Երևանի բուսաբանական այգու պայմաններում հասնում է 4 մ-ի: Ծաղկում և պտղաբերում է առատ, բայց սերմակալում է վատ: Ծաղիկները ճերմակ են, բուրումնավետ, 7-9-ական ողկուզանման ծաղկաբույլերում: Ծաղկակիրը թավոտ է, բաժակաթերթերը՝ ձվաձև կամ նշտարաձև, արտաքինից մերկ, երբեմն քիչ մազզուկոտ: Ծաղկաթերթերն էլիպսաձև են: Ծաղկում է հունիսի երկրորդ տասնօրյակում, պտղաբերում սեպտեմբերին: Բնականորեն տարածված է Հյուսիսային Ամերիկայում:

***Philadelphus latifolius* Schrad., Սրնգենի լայնատերևավոր:** Երևանի բուսաբանական այգու պայմաններում ծաղկում, պտղաբերում, սերմակալում է: Լայնատարած, գնդաձև սաղարթով թուփ է, որի բարձրությունը 2-2,5 մ է: Ծաղկում է հունիսի առաջին տասնօրյակում: Ծաղիկները սպիտակ, խոշոր, խիստ բուրումնավետ են: Բնականորեն տարածված է Հյուսիսային Ամերիկայում:

***Philadelphus lewisii* Pursh, Սրնգենի Լյուիսի:** Երևանի բուսաբանական այգու պայմաններում հաջողությամբ ծաղկում, պտղաբերում և սերմակալում է: Մինչև 3 մ բարձրության հասնող թուփ է, լայնատարած գնդաձև սաղարթով: Ծաղիկները ճերմակ են, բուրումնավետ, 5-9-ական ծաղիկներով ծաղկաբույլերում: Ծաղկում է հունիսին և պտղաբերում օգոստոս ամսին:

***Philadelphus* × *magnificus* Koehne, Սրնգենի հիասքանչ:** Միջտեսակային հիբրիդ է *Ph. grandiflorus* × *Ph. pubescens* տեսակների միջև: Երևանի բուսաբանական այգու պայմաններում բավականին փարթամ, մինչև 4 մ հասնող, ուղղաձիգ սաղարթով թուփ է, տերևները խոշոր, մուգ կանաչավուն են, ծաղիկները՝ խոշոր, ճերմակ, բուրումնավետ: Ծաղկում է հունիսի առաջին տասնօրյակում, պտղաբերում օգոստոս ամսին:

***Philadelphus pekinensis* Rupr., Սրնգենի պեկինյան:** Երևանի բուսաբանական այգու պայմաններում թուփ է՝ 1-2 մ բարձրությամբ, ծաղկում, պտղաբերում և սերմակալում է առատ: Ծաղիկները դեղնասպիտակավուն են, բուրումնավետ: Ծաղկում է մայիսի վերջին կամ հունիսի սկզբին, պտղաբերում օգոստոսին: Բնականորեն տարածված է Չինաստանում, Մոնղոլիայում: Գեղազարդ է, մեղրատու, մշակության մեջ կիրառվող տեսակ է:

***Philadelphus schrenkii* var. *Rupr. et Maxim*, Սրնգենի Շրենկի:** Երևանի բուսաբանական այգու պայմաններում թուփ է՝ 2-3 մ բարձրությամբ: Ծաղկում, պտղաբերում և սերմակալում է առատ: Ծաղիկները սպիտակ են, բուրումնավետ, ծաղկաթերթերը՝ լայն: Ծաղկում է մայիս-հունիս և պտղաբերում օգոստոս ամիսներին: Բնականորեն տարածված է Ամուր գետի ավազանում, Չինաստանում և Ճապոնիայում:

***Philadelphus schrenkii* var. *jackii* Koehne, Սրնգենի Շրենկի Ջեքի:** Սրնգենու Շրենկի այլատեսակներից է: Երևանի բուսաբանական այգու պայմաններում ծաղկում, պտղաբերում, սերմակալում է առատ, թփի բարձրությունը հասնում է 1-2 մ-ի: Ծաղկում է հունիսի առաջին տասնօրյակում, բուրումնավետ, սպիտակադեղնավուն ծաղիկներով, պտղաբերում է օգոստոսին: Բնականորեն տարածված է Չինաստանում:

***Philadelphus sericanthus* Koehne, Սրնգենի մետաքսյա:** Աճում է Վանաձորի բուսաբանական այգում: Թփերի բարձրությունը հասնում է 4 մ-ի: Ծաղկում է հունիսի առաջին տասնօրյակում, պտղաբերում և սերմակալում է: Ծաղիկները՝ սպիտակ, բուրումնավետ: Բնականորեն տարածված է Չինաստանում:

***Philadelphus tenuifolius* Rupr et Maxim., Սրնգենի նրբատերև:** Երևանի բուսաբանական այգու պայմաններում 2-3 մ բարձրությամբ թուփ է: Ծաղկում է ոչ առատ, պտղաբերում է և սերմակալում վատ: Ծաղկում է հունիսի 2-րդ տասնօրյակում, պտղաբերում սեպտեմբեր ամսին: Ծաղիկները՝ սպիտակավուն, թույլ հոտով, 5-11-ական ծաղիկներով հավաքված ողկուզանման ծաղկաբույլերում: Բնականորեն տարածված է Ամուր գետի ավազանում, Չինաստանում և Ճապոնիայում:

***Philadelphus* × *virginalis* Rehd., Սրնգենի կուսական:** Անհայտ ծագմամբ հիբրիդ է, կամ ըստ Ռեդդերի՝ հանդիսանում է *Ph. lemoinei* x *Ph. nivalis plenus* տեսակների միջև [19]: Երևանի բուսաբան-

նական այգու պայմաններում ունի 2,5-3 մ բարձրություն, առատ ծաղկում, պտղաբերում և սերմակալում է: Ծաղիկները՝ խիստ բուրոմնավետ, հավաքված 3-7-ական միջև 12 սմ երկարությամբ ողկուզանման ծաղկաբույլերում, կրեմագույն: Ծաղկում է հունիսի կեսերին, պտղաբերում օգոստոսի վերջին, սերմակալում՝ հոկտեմբերին:

Philadelphus × zeyheri Schrad., Սրնգենի Ցեյերի: Հնարավոր է՝ ունի հիբրիդային ծագում՝ *Ph. coronaries* × *Ph. inodorus* կամ *Ph. coronarius* × *Ph. grandiflorus* տեսակների միջև: 2-3 մ բարձրությամբ, լայնատարած գնդաձև սաղարթով թուփ է: Երևանի բուսաբանական այգու պայմաններում ծաղկում, պտղաբերում և սերմակալում է: Ծաղիկները սպիտակավուն են, բուրոմնավետ, ծաղկաթերթերը՝ լայն, ձվաձև: Բաժակաթերթերը՝ նշտարաձևաձև, սրածայր, մերկ կամ թույլ արտահայտված թափուտությամբ: Ծաղկում է հունիս և պտղաբերում օգոստոս ամիսներին:

Արդյունքներ և քննարկում: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ սրնգենու թփերի քանակով մեծամասամբ հարուստ են Երևանի բուսաբանական այգին և Իջևանի դենդրոպարկը, իսկ տաքսոնոմիական բազմազանությամբ՝ միայն Երևանի բուսաբանական այգին: Ուսումնասիրությունների արդյունքում հաջողվել է որոշել ներմուծված 10 տեսակների, 3 հիբրիդների, 1 պարտիզային ձևի մորֆոլոգիական հատկանիշները, տաքսոնոմիական պատկանելությունը: Ընդ որում Երևանի բուսաբանական այգում աճում են հայտնաբերված բոլոր տաքսոնները, Սևանի բուսաբանական այգում՝ 1, Կիրովականի բուսաբանական այգում՝ 1, Իջևանի դենդրոպարկում՝ 2 տաքսոններ:

ՀՀ բուսաբանական այգիների և Իջևանի դենդրոպարկի պայմաններում վեգետացիայի տևողությունն ուսումնասիրված տեսակների մոտ տատանվում է 200-220, ծաղկման տևողությունը՝ 15-25 օրերի սահմաններում: Սերմերը հավաքվում են նոյեմբեր ամսին: Ամենավաղ ծաղկող տեսակներն են՝ *Ph. pekinensis*, *Ph. schrenkii*, *Ph. coronarius*, ամենաուշը՝ *Ph. virginialis*, *Ph. gordonianus*, *Ph. tenuifolius* տեսակները: Ամենատերկար ծաղկման տևողությամբ աչքի են ընկնում *Ph. caucasicus*, *Ph. lewisii*, *Ph. latifolius* տեսակները և *Ph. coronarius* L. f. fl. Pl. hort. պարտիզային ձևը, ծաղկի ճերմակ գույնով՝ *Ph. lewisii* տեսակը, ուժեղ անուշ բույրով՝ *Ph. coronarius*, *Ph. caucasicus*, *Ph. pekinensis*, *Ph. schrenkii*, *Ph. virginialis* տեսակները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արարատյան Ա. Գ. Ինչպես կազմել հերբարիում, Երևան, 37 էջ, 1954:
2. Ծառուրյան Թ. Գ., Գևորգյան Ս. Լ. Ռուսերեն-անգլերեն-հայերեն բուսաբանական տերմինների համառոտ բառարան, Երևան, 248 էջ, 2003:
3. Վարդանյան Ժ. Հ., Գրիգորյան Ա. Ա. Սրնգենին (*Philadelphus* L.) որպես արժեքավոր թփատեսակների ելակյուղ Հայաստանի բուսաբանական այգիներ ներմուծելու համար: Հայաստանի կենսաբան. հանդես, Երևան, 73, 1, էջ 74-81, 2021:
4. Аннотированный каталог деревьев и кустарников ботанических садов и дендропарков Армянской ССР. Бюлл. бот. сада АН Арм. ССР, № 27, 164 с. 1985.
5. Воробьев Д. П. Дикорастущие деревья и кустарники Дальнего Востока, Л., 275 с., 1968.
6. Дендрофлора Кавказа / Гл. ред. В. З. Гулисашвили, 1, Тбилиси, 309 с., 1963.
7. Деревья и кустарники СССР: Дикорастущие, культивируемые и перспективные для интродукции/ под. ред. С. Я. Соколова, М.-Л., 3, 871 с., 1954.
8. Заиконникова Т. И. О самостоятельности сем. *Hydrangeaceae* Dum. Новости систематики высших растений, М.-Л., с. 139-144, 1964.
9. Тахтаджян А. Л. Происхождение и расселение цветковых растений Л., 147 с. 1970.
10. Тахтаджян А. Л. Система и филогения цветковых растений, М.-Л., 611 с., 1966.
11. Тахтаджян А. Л. Система магнолиофитов. Л., 439 с., 1987.
12. Федоров А. А., Артюшенко З. Т. Атлас по описательной морфологии высших растений: Цветок. Л., 350 с. 1975.

13. Федоров А.А., Кирпичников М.Э., Артюшенко З.Т. Атлас по описательной морфологии высших растений: Лист. М.- Л., 302 с., 1956.
14. Федоров А.А., Кирпичников М.Э., Артюшенко З.Т. Атлас по описательной морфологии высших растений: Стебель и корень. М.- Л., 350 с., 1962.
15. Флора СССР/ под. ред. В.Л. Коморова, М.- Л., изд-во АН СССР, 9, 540 с., 1939.
16. *Angiosperm Phylogeny Group*. An update of the Angiosperm Phylogeny Group classification for the orders and families of flowering plants: APG III // Botanical Journal of the Linnean Society, 161, 2, p. 105-121, 2009.
17. *Angiosperm Phylogeny Group*. An update of the Angiosperm Phylogeny Group classification for the orders and families of flowering plants: APG IV // Botanical Journal of the Linnean Society, 181, 1 (24 March), p. 1-20, 2016.
18. Hu S-Y A Monograph of the Genus *Philadelphus*: Journal of the Arnold Arboretum, 35, 4, p. 275-333, 1954.
19. Rehder A. Manual of cultivated trees and shrubs. New York, p. 264-275, 1949.
20. Stebbins G.L. Evolution Above the Species Level. [Harvard University Press](https://www.harvard.edu/press/). 399 p., 1974.

Ստացվել է 26.08.2022



Հայաստանի կենսաբ. հանդես, 4 (74), 2022

DOI:10.54503/0366-5119-2022.74.4-45

«ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄ

Ա.Լ. ԱՐԱՍՅԱՆ¹, Տ.Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ²

¹ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն,

²Անկախ փորձագետ

tatyana_danielyan@yahoo.com

Ներկայացված են «Դիլիջան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիթորինգի ներդրման սկզբունքները և մոտեցումները՝ ներառյալ մոնիթորինգի օբյեկտների ընտրության չափանիշները, տեսակների ու էկոհամակարգերի մոնիթորինգի իրականացման համար նախատեսված տարածքները և ընտրված օբյեկտների մոնիթորինգի իրականացման մեթոդա-բանությունը:

Կենսաբազմազանություն – մոնիթորինգ-տեսակներ – էկոհամակարգեր

Представлены принципы и подходы внедрения системы мониторинга биоразнообразия в Дилижанском национальном парке, включая разработку критериев отбора объектов мониторинга, выделения территорий для осуществления мониторинга видов и экосистем и методологии проведения мониторинга.

Биоразнообразие – мониторинг – виды – экосистемы

The principles and approaches of the implementation of the biodiversity monitoring system in Dilijan National Park are presented, including the development of criteria for the selection of monitoring objects, the allocation of territories for monitoring species and ecosystems and the methodology of monitoring.

Biodiversity – monitoring – species – ecosystems

«Դիլիջան» ազգային պարկը (ԴԱՊ) 2020թ.-ից ընդգրկվել է ՖԱԾՈՎյան ավազանի երկրներում շրջակա միջավայրի պահպանության համատեղ մոնիթորինգ (BSB 884 ECO-Monitoring) ծրագրում, որն ուղղված է ՍԱԾՈՎյան ավազանի մի շարք երկրներում (Բուլղարիա, Ռումինիա, Վրաստան, Հայաստան) բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) համանման խնդիրների լուծմանը՝ էկոլոգիական մոնիթորինգի և տեղեկատվության անդրսահմանային համատեղելի/համադրելի տվյալների մատչելիության մակարդակի բարձրացման միջոցով: Մոնիթորինգի համակարգի ներդրմամբ համադրելի տվյալների և արդիական տեղեկատվության ապահովման շնորհիվ կստեղծվի էկոլոգիական տվյալների հավաքման, մշակման և վերլուծության ընդհանուր հարթակ, որը կներառի մշտադիտարկվող թիրախային տարածքներում տարբեր պատ-

ճառներով առավել վնասված կենսաբազմազանության (ԿԲ) տեսակների և Էկոհամակարգերի, դրանց բարվոք վիճակը վտանգող սպառնալիքների, ճնշման ձևերի ու պոտենցիալ աղբյուրների գնահատման արդյունքները:

Տիլիջանի ազգային պարկը գտնվում է ՀՀ հյուսիս-արևելքում՝ Տավուշի, փոքր հատվածներով նաև Լոռու և Գեղարքունիքի մարզերում: Պարկի տարածքը, համաձայն ՀՀ կառավարության 23.02.2017թ. N 190-Ն որոշման, կազմում է 33765 հա, պահպանման գոտու տարածքը՝ 8167 հա, որը նախատեսվում է ընդլայնել 10.753 հեկտարով: Բազմաթիվ տեսակների համար պարկում ստեղծված է բնակության, բազմացման, զարգացման բարենպաստ և ապահով կենսամիջավայր: Այստեղ բուսակենդանական աշխարհը ներկայացված է հետևյալ տեսակային կազմով [3, 4, 6, 7].

ա/ **Բարձրակարգ բույսեր**՝ շուրջ 1150 տեսակ, որոնցից 17-ը ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, 14 տեսակը Էնդեմներ են, որոնցից 7-ը Հայաստանի, 3-ը Կովկասի, 4-ը Անդրկովկասի Էկոտարածաշրջանների համար:

բ/ 480 մակրոսկոպիկ **սնկերի** տեսակներ և ենթատեսակներ, որոնցից 176 տեսակը՝ ուտելի, շուրջ 50 տեսակներն ունեն բուժիչ հատկություններ, իսկ 38 տեսակը թունավոր սնկեր են:

գ/ **Անողնաշար կենդանիներ**՝ բզեզների ողջ ֆաունայի մոտ 12%-ը (512 տեսակ), թիթեռների շուրջ 50%-ը և մրջյունների 25%-ը: ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված է 15 տեսակ (որոնցից 6-ը գրանցված են նաև Բեռնի կոնվենցիայի Հավելված 2-ում, 5-ը՝ ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում): Միջատներից 7-ը Հայաստանի, 18-ը Անդրկովկասի և 30-ը Կովկասի Էկոտարածաշրջանների Էնդեմիկներ են:

դ/ **Ողնաշարավոր կենդանիներ**՝ 286 կենդանատեսակներ, որոնցից 53-ը ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, 17-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Այդ թվում՝ 15 ձկնատեսակ, 4 տեսակի երկկենցաղներ, 22 տեսակի սողուններ (7 տեսակներ ընդգրկված են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում, 6-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում, 3 տեսակ Էնդեմիկ են Անդրկովկասի, իսկ 2-ը՝ Կովկասի համար), շուրջ 190 տեսակի թռչուններ (որոնցից 130-ը այստեղ բնադրում են, 36 տեսակը գրանցված են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում, 11-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում), 55 տեսակի կաթնասուններ (որոնցից 9-ը գրանցված են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում, 3-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում, մեկ Էնդեմիկ տեսակ՝ Անդրկովկասի և 7 տեսակ՝ Կովկասի համար):

Պետք է նշել, որ թեպետ ԴԱՊ կենսաբազմազանության ուսումնասիրությունները սկսվել են դեռևս մեկ դար առաջ, սակայն դրանք շարունակվում են առ այսօր, և ներկայացված տվյալները գիտականորեն լրացվում ու ճշգրտվում են, ինչն ապահովվում է համապատասխան մասնագետների և ազգային պարկի անձնակազմի բազմամյա դիտարկումների շնորհիվ:

Էկոհամակարգային մակարդակով ԴԱՊ-ում առավել կարևորվում են անտառային, ջրային, մարգագետնային Էկոհամակարգերը, որոնք ունեն բնապահպանական, սոցիալական, գիտակրթական մեծ արժեք: Դրանցից են Աղավնավանքի (Ախնաբաղի) կենու պուրակը, Հաղարծնի հաճարենու և Խաչարծանի կաղնու անտառները, սոճու անտառը (Արեգունու և Փամբակի լեռնաշղթաների լանջերին), խառը անտառները, միջին լեռնային գոտու մարգագետնային բնակմիջավայրերը, Պարզ և Գոշի լճերը, որոնք առանձնահատուկ դեր են խաղում տեսակների գոյության համար [1, 11, 14, 18]:

Կենսաբազմազանությունը ԴԱՊ-ում տեսակային և Էկոհամակարգային մակարդակով ենթարկվում է բազմատեսակ ճնշումների, որոնք հիմնականում գոյանում են բնական և մարդածին հետևյալ ազդեցությունների շնորհիվ [3-5]:

Մարդածին ճնշման ազդեցություններ՝ ապօրինի ծառահատումներ, անասունների արածեցում, ենթակառուցվածքների անկանոն զարգացում (ՓՀԷԿ, վարձակալված հողամասերում շինարարություն, հավելյալ ճանապարհների կառուցում), չկարգավորված զբոսաշրջություն և ռեկրեացիա, բույսերի չկանոնակարգված հավաք, որսագողություն և անօրինական ձկնորսություն, աղտոտում և աղբոտում:

Բնական գործոնների ազդեցությունը՝ սողանքներ (այդ թվում՝ քարայթափումներ), ծառերի քամատապալումներ, հորդեհներ, ինվազիվ տեսակների ներթափանցում, վնասատուների և հիվանդությունների բռնկումներ: Նման ազդեցությունները հաճախ ուղղակի կամ միջնորդված կապված են կլիմայի փոփոխությունների հետ:

«Դիլիջան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիթորինգի (ԿՄ) համակարգի ներդրման հիմնական նպատակն է կանխատեսել պարկի տարածքում բնական ու մարդածին ազդեցությունների հետևանքով առաջ եկած գործընթացների զարգացումը և կառավարման անհրաժեշտ միջամտությունների միջոցով նպաստել լանդշաֆտների, բնական միջավայրերի և տեսակների պահպանության բարելավմանը [2, 4, 28]:

Հաշվի առնելով «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի սկզբունքները (1993), ինչպես նաև ազգային առանձնահատկություններն ու գիտական ուսումնասիրությունների մակարդակը՝ ԴԱՊ-ում որպես կենսաբազմազանության մոնիթորինգի օբյեկտներ առաջնայնությունը տրվել է այն բնակմիջավայրերին, որոնք համապատասխանում են հետևյալ չափանիշներին.

* բնութագրվում են հարուստ կենսաբազմազանությամբ

* աչքի են ընկնում հազվագյուտ, էնդեմիկ կամ անհետացման վտանգի տակ գտնվող տեսակների զգալի քանակով,

* ունեն բնապահպանական, սոցիալական, գիտական և մշակութային կարևոր նշանակություն:

Գիտակցելով յուրաքանչյուր կենսաբանական տեսակի ու Էկոհամակարգի պոտենցիալ նշանակությունը՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ Նույնիսկ համեմատաբար փոքր տարածքում ամբողջ կենսաբազմազանության մոնիթորինգային դիտարկումների անցկացումը փաստացի անհնարին է [12,15]: Մի կողմից, ԿԲ տեսակային կազմը միշտ գտնվում է դինամիկայի մեջ՝ տեսակների տարածման արեալների փոփոխության հաշվին (հատկապես մարդու գործունեության և կլիմայական փոփոխությունների հետ կապված) և տեսակձևավորման գործընթացների շնորհիվ: Մյուս կողմից, նման դիտարկումները պահանջում են մեծ թվով մասնագետներ և ժամանակի հսկայական ծախսեր: Օրինակ, Եվրոպական հայտնի ազգային պարկում կարգաբանական խմբերի բոլոր տեսակների որոշման համար ներգրավվել են ավելի քան 200 հետազոտողներ [27]:

Ուստի մոնիթորինգային դիտարկումները պետք է նպատակաուղղվեն ԴԱՊ-ի բնական (անտառային, տափաստանային, մարգագետնային, ջրային) Էկոհամակարգերին, բուսական և կենդանական աշխարհի առանձին օբյեկտներին, այդ թվում՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների պոպուլյացիաների վիճակի բացահայտմանը, ինչպես նաև այն գործոնների հայտնաբերմանը և դրանց ազդեցության աստիճանի գնահատմանը, որոնք սպառնալիք են և կարող են հավանական վտանգ ներկայացնել ԴԱՊ-ի Էկոհամակարգերի և ԿԲ-ի համար: Անհրաժեշտ է նաև առաջնահերթ նշանակություն տալ օտարածին այն տեսակներին, որոնց ներթափանցումը բնական Էկոհամակարգեր և արագ բազմացումը սպառնում են Էկոհամակարգերի կայունությանը (ինվազիվ տեսակներ) [10,13,21]:

Մոնիթորինգի գործողությունները պետք է հասցեավորեն նաև տեսակների բնական միջավայրի փոփոխության միտումները, այդ թվում՝ կլիմայի փոփոխության և զբոսաշրջության հետ կապված, որոնք կարող են հավանական վտանգ ներկայացնել լանդշաֆտների և Էկոհամակարգի ամբողջականությանը:

Նյութ և մեթոդ: Տեսակի/պոպուլյացիայի մակարդակով մոնիթորինգի օբյեկտների ընտրության համար հիմքը դրանց կարևորությունն է տվյալ ԲՀՊՏ-ի համար՝ անհետացման վտանգի տակ գտնվելը, մշակովի կամ ընտելացված տեսակների/ցեղերի վայրի ազգակիցներ հանդիսանալը, գյուղատնտեսական, դեղագործական կամ այլ տնտեսական, ինչպես նաև սոցիալական, մշակութային, գիտական նշանակություն ունենալը և այլն [2,15]:

Յուրաքանչյուր ընտրված օբյեկտի համար անհրաժեշտ է ճշտել դրա կարգաբանական պատկանելությունը (տեսակ, ցեղ, ընտանիք), գտնվելու վայրը, զբաղեցրած տարածքի սահմանները, անհրաժեշտության դեպքում նաև տվյալ տեսակի բնակմիջավայրի (աճելավայրի, ապրելավայրի) վիճակը (հողի, մթնոլորտի, ջրի աղտոտվածությունը):

Էկոհամակարգի մակարդակով մոնիթորինգի օբյեկտների ընտրության համար հիմք են Էկոհամակարգի հետևյալ առանձնահատկությունները՝ կենսաբազմազանության հարստությունը, Էնդեմիկ, ռելիկտային կամ անհետացման վտանգված տեսակների մեծ քանակությունը, կարևորությունը միգրացիա կատարող կենդանիների համար, սոցիալական, տնտեսական, գիտական կամ մշակութային նշանակությունը, վայրի (կուսական) տարածքների առկայությունը և այլն:

Էկոհամակարգի վիճակը գնահատելու համար առանձնացվում են մեկ կամ մի շարք բնորոշ օբյեկտներ և բիոհնդիկատորներ, որոնց միջոցով հնարավոր է բացահայտել բնական կամ մարդածին ազդեցությունն Էկոհամակարգի վրա:

Մոնիթորինգի տարածքների ընտրությունը կախված է դրա նպատակներից: Ընդ որում նպատակահարմար է առանձնացնել Ետալոնային տարածքներ (սովորաբար՝ արգելոցային գոտին), ֆոնային տարածքներ (ստանդարտ դիտարկումների համար) և մարդածին տրանսֆորմացված տեղամասեր: Դիտանցի նախնական փուլում GPS-ի միջոցով նշվում են մոնիթորինգի իրականացման տեղանքի (փորձահրապարակների կամ որսամուշներ վերցնելու) ճիշտ տեղադիրքերը՝ կոորդինատները և բարձրությունը ծովի մակերևույթից:

Անտառային Էկոհամակարգերի մոնիթորինգը կատարվում է ընդհանուր սկզբունքներով՝ հաշվի առնելով նաև դոմինանտ տեսակների և տեղանքի առանձնահատկությունները [4, 5, 15, 20]:

Հաճարենու, կաղնու և կաղնու-բոխու անտառներում փորձահրապարակները հիմնվում են ԱՊ-ի բոլոր գոտիներում՝ ընդգրկելով կաղնու երկու տեսակներով տեղամասեր տարբեր բարձրությունների վրա: Փորձահրապարակների թիվը արգելոցային գոտում՝ -3-5, ռեկրեացիոն և տնտեսական գոտիներում՝ -7-8: Փորձահրապարակների չափերը՝ ոչ պակաս, քան 400 մ² (20 x 20 մ): Խոտային շարահարկի փոփոխությունների և ծառաթփային ինվազիվ տեսակների ներթափանցման գնահատման համար գոտիները պետք է լինեն ոչ պակաս, քան 10մ² (10 x 1մ): Վերարտադրությունը գնահատելու համար քառակուսիները պետք է ունենան 1 մ² (1 x 1 մ) չափ և 3-ից ոչ պակաս կրկնողություն: Որպես մոնիթորինգի ցուցանիշներ գրանցվում են հաճարենու և կաղնու հասուն ծառերի թիվն ու բնի տրամագիծը, և հաշվարկվում է դրանց խտությունը (ծառերի թիվը 1 մ²-ում), իսկ ինվազիվ տեսակների համար՝ առանձնյակների քանակը: Գրանցվում է հիվանդ և վնասված ծառերի թիվը, և հաշվարկվում է դրանց տոկոսը: Վերարտադրությունը գնահատելու համար քառակուսիները պատահական ընտրվում են փորձահրապարակի վրա (երեք կրկնողությամբ), դրանցում հաշվարկվում է հաճարենու և կաղնու բուսակների թիվը՝ ըստ հետևյալ չափերի՝ <5 սմ, 5-10 սմ, 10-15 սմ, >15 սմ: Տվյալների հավաքագրման հաճախականությունը՝ արգելոցային գոտում՝ 2 տարին 1 անգամ, ռեկրեացիոն և տնտեսական գոտիներում՝ ամեն տարի 2 անգամ:

Կենու պուրակի մոնիթորինգի համար ստորին, միջին և վերին մասերում գետի երկու ափերին հիմնվում են մեկական փորձահրապարակներ՝ ընդհանուր թվով 6 փորձահրապարակ: **Սոճուտներում** հիմնվում են 6-8 փորձահրապարակներ: Փորձահրապարակների չափերը՝ առնվազն 400 մ² (20 x 20 մ): Ինվազիվ տեսակների տարածման գնահատման համար հիմնվում են գոտիներ 10 մ² չափով (10 x 1 մ), կենու պուրակի դեպքում՝ ճանապարհից դեպի գետը և գետից դեպի պուրակի խորքը: Որպես մոնիթորինգի ցուցանիշներ գրանցվում են կենու և սոճու հասուն ծառերի թիվը ու բնի տրամագիծը, և հաշվարկվում է դրանց խտությունը (ծառերի թիվը 1 մ²-ում): Գրանցվում է կենու և սոճու հիվանդ և վնասված ծառերի թիվը, և հաշվարկվում է դրանց տոկոսը:

Վերարտադրությունը գնահատելու համար քառակուսիները (3x3 մ) պատահական ընտրվում են փորձահրապարակի վրա, դրանցում հաշվարկվում է կենու և սոճու բուսակների թիվն ըստ հետևյալ չափերի՝ <5 սմ, 5-10 սմ, 10-15 սմ, >15 սմ: Ինվազիվ տեսակների ազդեցության գնահատման համար 10մ² փորձական տրանսեկտներում գնահատվում է դրանց առանձնյակների քանակը: Տվյալների հավաքագրման հաճախականությունը՝ առնվազն 2 տարին մեկ անգամ՝ ամռանը (հունիս-հուլիս):

Էնդեմիկ, անհետացող կամ հազվագյուտ բուսատեսակների մոնիթորինգի համար փորձահրապարակները պետք է հիմնվեն այն տարածքներում, որտեղ հայտնաբերվել են նման տեսակների պոպուլյացիաները՝ ընդգրկելով յուրաքանչյուր տեսակի առնվազն մեկ պոպուլյացիա: Հնարավորության դեպքում պետք է հիմնվեն Ետալոնային տարածքներում (արգելոցային գոտի) և առավել մարդածին ազդեցության ենթարկված հատվածներում: Նշված տեսակների նոր պոպուլյացիաների հայտնաբերման նպատակով ԱՊ-ի ամբողջ տարածքում պարբերաբար անցկացվում են զննումներ, և հայտնաբերման դեպքում հիմնվում են նոր փորձահրապարակներ: Բազմաթանկ պոպուլյացիաների դեպքում դրանք պետք է ունենան 10մ x 10մ չափը, մնացած տեսակների համար պետք է ընդգրկվի ամբողջ պոպուլյացիան: Ընտրված օբյեկտների վիճակի գնահատման համար գրանցվում են պոպուլյացիայի մոտավոր մակերեսը և տվյալ տեսակի առանձնյակների քանակը 1 մ²-ի վրա (պոպուլյացիոն խտությունը)՝ նշելով ծաղկող և/կամ պտղակալող նմուշների քանակը: Տվյալների հավաքագրման հաճախականությունը՝ առնվազն երկու տարին մեկ անգամ՝ հետազոտվող տեսակների ծաղկման ժամանակաշրջանում: Պարկի

տարածքում նոր պոպուլյացիաների որոնման գործողությունները պետք է կատարվեն ամեն տարի [12, 19]:

Ողնաշարավոր կենդանիների խոշոր տաքսոնոմիական խմբերի ներկայացուցիչների մոնիթորինգ.

Ա. Ձկնատեսակներ, որոնց դիտանցի նախնական փուլում GPS-ի միջոցով նշվում են Աղստև, Հաղարծին և Գետիկ գետերի վրա որսանմունքներ վերցնելու ճիշտ տեղադիրքերը՝ կորորդիանտները և բարձրությունը ծովի մակերևույթից, ինչպես նաև ընդհանուր տեղեկատվություն հազվագյուտ կամ Էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիաների վիճակի վերաբերյալ (արտաքին տեսքը, սեռատարիքային կազմը, հիվանդությունների դրսևորումները և այլն): Մոնիթորինգի համար գետերի վրա որսանմունքներ վերցնելու կետերը/փորձահրապարակները պետք է նախատեսվեն այն տարածքներում, որտեղ հայտնաբերված են «Արդյունքներ և քննարկումներ» բաժնում նշված տեսակների պոպուլյացիաները՝ ընդգրկելով յուրաքանչյուր տեսակի առնվազն մեկ պոպուլյացիա: Հիմնավորված լիարժեք կանխատեսումներ ունենալու համար մոնիթորինգի տվյալները անհրաժեշտ է ստանալ մշտական որսանմունքներ վերցնելու կետերից/փորձահրապարակներից, որոնք հնարավորության դեպքում պետք է հիմնվեն Էտալոնային տարածքներում և մարդածին ազդեցության առավել ենթարկված հատվածներում: Որսանմունքները վերցվելու են գիտական հետազոտությունների համար նախատեսված հատուկ էլեկտրական հոսանքով բռնիչների միջոցով (Electrofischer SUM 1200V) ցանցեր (սաչուկ) 0,5-0,7 սմ անցքով՝ գետերի վրա նախապես նշված կետերում, որոնց երկարությունը գետի երկայնքով պետք է լինի 10-15մ: Ձկնատեսակների մոնիթորինգի իրականացման համար որսանմունքների հավաքի մեթոդաբանությունն ավելի մանրամասն տրված է տարբեր էլեկտրական հոսանքով բռնիչների ուղեցույցներում:

Էլեկտրական հոսանքով բռնիչները հնարավորություն են տալիս աստիճանաբար մեծացնելու հոսանքի ուժը և առանց վնասելու ձկներին, կենդանի վիճակում բռնել տարբեր չափի ձկների առանձնյակներ՝ որսանմունքներում տեսակային կազմը և դրանց հարաբերական քանակությունը պարզելու/որոշելու նպատակով: Հետագա հետազոտությունների ժամանակ պետք է գրանցվեն փոփոխությունները՝ նշելով դրանք ընտրված փորձահրապարակների մասին նկարագրական և բարոտեզագրական նյութերում, այդ թվում՝ թվային բարոտեզներում և լուսանկարներում:

Ընտրված օբյեկտների (տեղաբնակ, ինվազիվ, Էնդեմիկ, ֆոնային տեսակներ, անհետացող կամ հազվագյուտ տեսակներ) վիճակի գնահատման համար գրանցվում են որսանմունքներում ձկների տեսակային կազմը և դրանց հարաբերական քանակությունը՝ յուրաքանչյուր տեսակի առանձնյակների քանակը նույն գետի տարբեր կետերում (պոպուլյացիոն խտությունը)՝ նշելով սեռահասուն և/կամ ձվադրող առանձնյակների քանակը: Տվյալների հավաքագրման հաճախականությունը՝ առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Պարկի տարածքում նոր ձկնատեսակների որոնման գործողությունները պետք է կատարվեն ամեն տարի [1, 22]:

Բ. Ժայռային մողեսներ: Նշված տեսակների մոնիթորինգի իրականացման նախնական փուլում GPS-ի միջոցով նշվում են որսանմունքներ վերցնելու համար նախատեսված ժայռային մողեսներին բնորոշ բիոտոպների (Ժայռային մերկացումներ, քարաթափվածքներ, անտառամեջ ճանապարհների եզրերի ժայռապատ հատվածներ, քարքարոտ լանջեր և այլն) ճիշտ տեղադիրքերը՝ կորորդիանտները և բարձրությունը ծովի մակերևույթից, ինչպես նաև ընդհանուր տեղեկատվություն սողունների պոպուլյացիաների վիճակի վերաբերյալ (արտաքին տեսքը, սեռատարիքային կազմը, հիվանդությունների դրսևորումները և այլն):

Մոնիթորինգի համար բնորոշ բիոտոպներում որսանմունքներ վերցնելու կետերը/փորձահրապարակները պետք է նախատեսվեն այն տարածքներում, որտեղ հայտնաբերված են վերը նշված տեսակների պոպուլյացիաները՝ ընդգրկելով յուրաքանչյուր տեսակի առնվազն մեկ պոպուլյացիա: Հիմնավորված լիարժեք կանխատեսումներ ունենալու համար մոնիթորինգի տվյալներն անհրաժեշտ է ստանալ մշտական որսանմունքներ վերցնելու կետերից/փորձահրապարակներից, որոնք հնարավորության դեպքում պետք է հիմնվեն Էտալոնային տարածքներում և մարդածին ազդեցության առավել ենթարկված հատվածներում: Որսանմունքները վերցվելու են գիտական հետազոտությունների համար նախատեսված հատուկ պատրաստված բռնիչների միջոցով (ձկան թել-լեսկաներ) քարտեզի վրա նախապես նշված կետերում, որոնց համար փորձահրապարակները պետք է ունենան 10 x 15մ չափը:

Ընտրված օբյեկտների (տեղաբնակ, Էնդեմիկ, ֆոնային տեսակներ, անհետացող կամ հազվագյուտ տեսակներ) վիճակի գնահատման համար գրանցվում են որսանմունքներում մողեսների տեսակային կազմը և դրանց հարաբերական քանակությունը՝ յուրաքանչյուր տեսակի առանձնյակների քանակը նույն տեղամասի տարբեր կետերում (պոպուլյացիոն խտությունը)՝ նշելով սեռահասուն և/կամ ձվադրող առանձնյակների քանակը: Տվյալների հավաքագրման հաճախականությունը՝ առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Պարկի տարածքում նոր տեսակների որոնման գործողությունները պետք է կատարվեն ամեն տարի [3, 16]:

Գ. Թռչնատեսակներ: Մոնիթորինգի համար փորձահրապարակները պետք է նախատեսվեն այն տարածքներում, որտեղ հայտնաբերվել են **“Արդյունքներ և քննարկումներ”** բաժնում նշված տեսակների պոպուլյացիաները՝ ընդգրկելով յուրաքանչյուր տեսակի առնվազն մեկ պոպուլյացիա: Հիմնավորված լիարժեք կանխատեսումներ ունենալու համար մոնիթորինգի տվյալներն անհրաժեշտ է ստանալ մշտական փորձահրապարակներից, որոնք հնարավորության դեպքում պետք է հիմնվեն Էտալոնային տարածքներում և մարդածին ազդեցության առավել ենթարկված հատվածներում: Բացի այդ նշված տեսակների նոր պոպուլյացիաների հայտնաբերման նպատակով անհրաժեշտ է պարկի ամբողջ տարածքում պարբերաբար անցկացնել զննումներ և հայտնաբերման դեպքում հիմնել նոր փորձահրապարակներ:

Պոպուլյացիաների համար փորձահրապարակները պետք է ունենան 1000 x 1000մ չափը, որոշ դեպքերում փորձահրապարակի սահմաններում պետք է ընդգրկվի ամբողջ պոպուլյացիան: Դիտարկումներն իրականացվելու են դաշտային պայմաններում վիզուալ եղանակով հեռադիտակների միջոցով, դիտարկման համար նախապես ընտրված առավել հարմար տեղադիրքներից, որոնք կապահովեն առավել մեծ տեսադաշտ:

Այս եղանակով դիտարկումները հնարավորություն են տալիս, առանց անհանգստացնելու թռչուններին, որոշելու և գրանցելու տեսակը, առանձնյակների թվաքանակը, սեռատարիքային կազմը: Հետագա հետազոտությունների ժամանակ պետք է գրանցվեն փոփոխությունները՝ նշելով դրանք ընտրված փորձահրապարակների տեղադիրքի մասին նկարագրական և քարտեզագրական նյութերում, այդ թվում՝ թվային քարտեզներում, լուսանկարներում:

Ընտրված օբյեկտների (ֆոնային տեսակներ, անհետացող կամ հազվագյուտ տեսակներ) վիճակի գնահատման համար գրանցվում են թռչունների տեսակային կազմը և դրանց հարաբերական քանակությունը բնորոշ բիոտոպներում՝ յուրաքանչյուր տեսակի առանձնյակների քանակը տարբեր կետերում (պոպուլյացիոն խտությունը)՝ նշելով սեռահասուն և/կամ ձվադրող առանձնյակների քանակը: Տվյալների հավաքագրման հաճախականությունը՝ առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Պարկի տարածքում նոր պոպուլյացիաների որոնման գործողությունները պետք է կատարվեն ամեն տարի [25]:

Դ. Կաթնասուններ: Մոնիթորինգի համար փորձահրապարակները պետք է նախատեսվեն այն տարածքներում, որտեղ հայտնաբերվել են **“Արդյունքներ և քննարկումներ”** բաժնում նշված տեսակների պոպուլյացիաները՝ ընդգրկելով յուրաքանչյուր տեսակի առնվազն մեկ պոպուլյացիա: Հիմնավորված լիարժեք կանխատեսումներ ունենալու համար մոնիթորինգի տվյալները անհրաժեշտ է ստանալ մշտական փորձահրապարակներից, որոնք հնարավորության դեպքում պետք է հիմնվեն Էտալոնային տարածքներում և մարդածին ազդեցության առավել ենթարկված հատվածներում: Բացի այդ նշված տեսակների նոր պոպուլյացիաների հայտնաբերման նպատակով անհրաժեշտ է պարկի ամբողջ տարածքում պարբերաբար անցկացնել զննումներ և հայտնաբերման դեպքում հիմնել նոր փորձահրապարակներ:

Պոպուլյացիաների համար փորձահրապարակները պետք է ունենան 1000 x 1000մ չափը, երթուղիները՝ 3-5 կմ երկարությամբ: Դիտարկումներն իրականացվելու են դաշտային պայմաններում, դիտարկման համար նախապես ընտրված առավել հարմար տեղադիրքներից, որոնք կապահովեն առավել մեծ տեսադաշտ, վիզուալ եղանակով, հեռադիտակների միջոցով, ինչպես նաև երթուղային դիտարկումների միջոցով՝ ֆիքսելով կենդանիների հետքերը և դրանց արգասիքները:

Այս եղանակով դիտարկումները հնարավորություն են տալիս առանց անհանգստացնելու կենդանիներին, որոշելու և գրանցելու տեսակը, առանձնյակների թվաքանակը, սեռատարիքային կազմը: Հետագա հետազոտությունների ժամանակ պետք է գրանցվեն դրա փոփոխությունները:

Կաթնասունների մոնիթորինգի համար տվյալների գրանցումը նպատակահարմար է իրականացնել նաև տարբեր դաշտային սարքավորումների, ներառյալ տեսագրող սարքերի (ֆոտոբնիչների) միջոցով:

Այս տեսակների մոնիթորինգի իրականացման համար դիտարկումների մեթոդաբանությունը (հետքերի և արգասիքների տեսքի առանձնահատկությունները) ավելի մանրամասն պետք է ներկայացվի դաշտային պայմաններում գործնական աշխատանքների/պարապմունքների ժամանակ:

Ընտրված օբյեկտների վիճակի գնահատման համար գրանցվում են կաթնասունների տեսակային կազմը և դրանց հարաբերական քանակությունը բնորոշ բիոտոպներում՝ յուրաքանչյուր տեսակի առանձնյակների քանակը տարբեր կետերում (պոպուլյացիոն խտությունը)՝ նշելով սեռահասուն առանձնյակների քանակը: Տվյալների հավաքագրման հաճախականությունը՝ առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Պարկի տարածքում նոր պոպուլյացիաների որոնման գործողությունները պետք է կատարվեն ամեն տարի [4, 9]:

Արդյունքներ և քննարկում: BSB 884 ECO-Monitoring ծրագիրն իրականացնող աշխատանքային խումբը, ուսումնասիրելով առկա գրական նյութերը և հաշվի առնելով 2020-2022թթ. ԴԱԴ-ի տարածքի անօդաչու թռչող սարքի (ԱԹՍ) միջոցով հետազոտության արդյունքները, ճշգրտել է կենսաբազմազանության մոնիթորինգի օբյեկտները՝ տեսակների և էկոհամակարգերի մակարդակով:

ԴԱԴ-ում անտառային կենսաբազմազանության մոնիթորինգի համար առանձնացվել են հետևյալ տեղամասերը/ բնակմիջավայրերը.

ա) Արևելյան հաճարենու (*Fagus orientalis*) անտառի տեղամաս Հաղարծին գետի ավազանում: Այս տարածքի հաճարկուտների միատարրությունը և պահպանվածությունը թույլ են տալիս առանձնացնել այդ բնակմիջավայրը՝ որպես սակավ ճնշված բուսակենդանական աշխարհի կենսամիջավայր:

բ) Փղաղ գետի հարևանությամբ գտնվող կաղնուտները, որոնք կազմված են կաղնու վրացական (*Quercus iberica*) և խոշորառնեղ (*Q. macranthera*) տեսակներից: Փղաղի կաղնուտները տարիներ շարունակ տուժել են հատկապես տարերային աղետներից (ուժեղ բամբակներ), այժմ պետք է գնահատել դրանց վիճակը:

գ) Խառը անտառներ, որտեղ աճում են նաև բոխու երկու տեսակներ: Սովորական բոխին (*Carpinus betulus*) տարածվում է անտառային գոտու ամբողջ տարածքում մինչև 2000 մ բարձրություն, իսկ արևելյան բոխին (*C. orientalis*)՝ մինչև 1500 մ բարձրություն: Բոխին հաճարենու և կաղնու հետ առաջացնում է հաճարենու-բոխու, կաղնու-բոխու խառը անտառներ, որոնց մոնիթորինգը խիստ անհրաժեշտ է, քանի որ բոխու տեսակները ճնշում են տնտեսապես ավելի արժեքավոր հաճարենու և կաղնու անտառների միատարրությունը:

դ) Սոճուտներ: Փշատերև ծառատեսակներից կազմված անտառները ԴԱԴ-ում գրավում են սահմանափակ տարածք՝ առանձին կղզյակների տեսքով: ԴԱԴ-ում հանդիպող սոճու բնական անտառները շատ հազվագյուտ են Հայաստանի համար, բացի այդ, տարածքում կան արհեստական սոճուտներ, որոնք ներկայումս դարձել են պարկի անտառային էկոհամակարգի անբաժանելի մասը: Դրանց վիճակի գնահատումը և մոնիթորինգը չափազանց կարևոր են պահպանվող տարածքի ընդհանուր վիճակի գնահատման համար: Կոխի սոճին (*Pinus kochiana*), որը հաճախ առաջացնում է խիտ սոճուտներ, հանդիպում է Հովվաշքի ավազանում՝ Արեգունու և Փամբակի լեռնաշղթաների լանջերին ժայռավեճաձև ավտոճանապարհի, այսպես կոչված Դիլիջանի ոլորանների շրջանում: Սոճին շատ է նաև Դիլիջան քաղաքում և մերձակա լեռնալանջերին:

ե) ԴԱԴ-ի տարածքում առանձնացվել է Ախնաբաղի կենու պուրակ-արգելավայրը, որը զբաղեցնում է մոտ 25 հա տարածք և գտնվում է Աղավնավանք գյուղի հարևանությամբ: Ռելիեֆային ծառատեսակը՝ կենի հատապտղային (*Taxus baccata*), նեղ ժայռավեճով ձգվում է Փղաղ գետի երկու ափերի երկայնքով՝ 1500-1800 մ բարձրությունների վրա: Այն ազգային պարկի ռելիեֆային եզակի էկոհամակարգ է, ունի մեծ գիտական, բնապահպանական և մշակութային արժեք:

զ) Ձկների մոնիթորինգի համար առանձնացվել են Աղստև գետի և դրա մեջ թափվող վտակների՝ Հովվաշուր, Շոողանաշուր, Հաղարծին և Բլղան միացման տեղամասերը, որտեղ իրականացվելու է ձկների որսը:

է) Աղստև գետի առափնյա ժայռային մերկացումները, ինչպես նաև Ախնաբաղի կենու պուրակ - արգելավայրի հարակից քարքարոտ տեղամասերը կծառայեն ժայռային մողեսների փորձնական դիտարկումների համար:

ը) Կենդանիների (կաթնասուններ և թռչուններ) տեսակների գոյության համար առանձնահատուկ դեր խաղացող էկոհամակարգերը (Հաղարծին և Աղավնավանք տեղամասերի տարբեր բարձրությունների վրա), որոնց կոնկրետ փորձահրապարակները պետք է որոշվեն փորձնական դիտարկումներից հետո:

«Դիլիջան» ազգային պարկում մոնիթորինգի օբյեկտներ հանդիսացող հաճարենու անտառների և կաղնու/կաղնու-բոխու անտառների ինդիկատորներ են դրանց դոմինանտ տեսակները՝ հաճարենի արևելյանը (*Fagus orientalis*), կաղնի վրացականը (*Quercus iberica*) և կաղնի խոշորառնեղը (*Quercus macranthera*):

Տվյալ օբյեկտները նաև բնապահպանական հատուկ հետաքրքրություններ կայացնող տարածքներ են, որոնք Դիլիջան ԱՊ-ի կազմում ներառված են Հայաստանում «Էմերալդ» Էկոլոգիական ցանցի մեջ [26]: Մշտական մոնիթորինգը թույլ կտա հայտնաբերել հնարավոր փոփոխությունները (բացասական կամ դրական) անտառներում՝ հաճախելի արևելյանի, կաղնի վրացականի ու կաղնի խոշորառեփ խտությունը/առատությունը գնահատելու միջոցով: Այս անտառների վիճակից զգալիորեն կախված է ազգային պարկի Էկոհամակարգային ծառայությունների և շրջակա միջավայրի (պարկի տարածքում և դրանից դուրս՝ պահպանման գոտում) ընդհանուր վիճակը: Կարևորվում է նաև բույսերի նոր, պոտենցիալ ինվազիվ տեսակների ներթափանցման ռեպերի գրանցումը: Միաժամանակ հնարավոր կլինի որոշակի եզրահանգումներ անել այս բնակմիջավայրում առկա անօրինական գործունեության մասին:

«Դիլիջան» ազգային պարկում սոճու անտառների և կենու պուրակի մոնիթորինգի օբյեկտներ են՝ սոճուները (բնական և արհեստական տնկարկներ) և դրանց դոմինանտ տեսակը՝ Կոխի սոճին (*Pinus kochiana*), կենու պուրակը և դրա դոմինանտ տեսակը՝ կենի հատապտղային (*Taxus baccata*): Տվյալ օբյեկտները նույնպես համարվում են Հայաստանի կարևորագույն բուսաբանական տարածքներ՝ բնապահպանական հատուկ հետաքրքրություններ կայացնող, որոնք Դիլիջան ԱՊ-ի կազմում ներառված են Հայաստանում «Էմերալդ» Էկոլոգիական ցանցի մեջ [27]:

ԱՊ-ում աճում են մի շարք տեսակներ, որոնք ունեն գլոբալ արժեք: Դրանցից հատուկ ուշադրության կարիք ունեն Հայաստանի համար Էնդեմիկ տեսակները և մի քանի տեսակ, որոնք ընդգրկված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում: Մոնիթորինգի ընթացքում անհրաժեշտ է հետևել այդ տեսակների պոպուլյացիաների վիճակին և գրանցել տեղի ունեցող փոփոխությունները: Այդ տեսակետից «Դիլիջան» ազգային պարկում բարձրակարգ բույսերի մոնիթորինգի օբյեկտներ են ընտրվել հետևյալ Էնդեմիկ, անհետացող կամ հազվագյուտ տեսակները.

1. **Ձևձաղիկ Միրզոևայի** (*Merendera mirzoevae*): Հայաստանի Էնդեմիկ է: Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ: Հայտնի է 2 ֆլորիստիկական շրջաններում: Հանդիպում է հիմնականում Դիլիջանի տեղամասում: Պոպուլյացիաների վիճակը բավարար է: Տեսակի աճման այլ վայրերում Էկոհամակարգների վրա շարունակվող մարդածին ազդեցությունները հնարավոր է՝ վատացնեն միջավայրի պայմանները և կրճատեն բնակության տարածքի մակերեսը:

2. **Շիկատակ կամ մահամորմ** (*Atropa bella-donna*): Խոցելի տեսակ: Հայտնի է 3 ֆլորիստիկական շրջաններում: Հայաստանից բացի, աճում է Արևելյան Կովկասում, Անդրկովկասում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Դրիմում, Անատոլիայում, Հյուսիսային Իրանում: Աճում է բացատներում, անտառների հատված ու հրդեհված հատվածներում, անտառեզրերին, խոնավ վայրերում: Արժեքավոր դեղաբույս է, բոլոր մասերը պարունակում են ալկալոիդներ: ԴԱՊ-ի Հաղարծինի ձորում, հաճախելու անտառի հատված մասում, հայտնաբերվել է մոտ 20 թուփ, լավ վիճակում. ծաղկում և պտղակալում են: Պոպուլյացիայի մակերեսի և խտության մեծացումը վկայում է հաճախելու անտառի առաջնային ենթանտառի վիճակի վատթարացման մասին:

3. **Վարդակակաչ գորտնուկային** (*Anemone ranunculoides*): Վտանգված տեսակ է: Հայտնի է միայն 1 ֆլորիստիկական շրջանում: Հայաստանի սահմաններից դուրս տարածված է Կովկասում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Հյուսիսային Անատոլիայում: Աճում է միջին լեռնային գոտում՝ ծովի մակարդակից 1000-2000 մ բարձրության վրա, անտառներում: Ծաղկում է ապրիլին, պտղակալում՝ մայիսին: Տեսակին, անտառների հատումների և այլ գործոնների պատճառով, սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում: Ազգային պարկի տարածքում հայտնաբերվել է Սևանի լեռնանցքի անտառի վերին սահմանագծում: Այն լավ վիճակում է: *Anemone ranunculoides* պոպուլյացիայի մակերեսի և խտության մեծացումը վկայում է բնական բուսականության վրա մարդածին ճնշման նվազեցման մասին:

Ինվազիվ տեսակների մոնիթորինգը Ազգային պարկի ԿՄ կարևոր բաղադրիչն է: Վերջին տարիներին ակտիվորեն ուսումնասիրվում են Ազգային պարկի Էկո-համակարգերի վրա ինվազիվ (օտար) բուսատեսակների անցանկալի դրսևորումները: Դեռևս 20-րդ դարի 80-90 թթ. կատարված հետազոտությունների ընթացքում ԱՊ տարածքում հայտնաբերվել են մի շարք ինվազիվ բուսատեսակներ, որոնք հիմնականում հարմարվել են դրա տնտեսական գոտու գյուղատնտեսական նշանակության հողերին և երոզացված ու խախտված տեղավայրերին: Առանձին տեսակներ, որոնք հանդիպում էին բնական Էկոհամակարգերում, սովորաբար զբաղեցնում էին խիստ սահմանափակ տարածքներ խոնավ վայրերում և փաստորեն բնական բիոտոպների համար վտանգ չէին ներկայացնում:

Սակայն օտարածին տեսակների տարածման ժամանակակից վերլուծությունը ցույց է տալիս [10, 21, 24], որ դրանցից որոշ մասը վերջին տարիներին զգալիորեն ընդլայնել են իրենց տարածման սահմանները Հյուսիսային Հայաստանում (հավանաբար կապված կլիմայական պայմանների փոփոխման և խախտված բնակմիջավայրերի տարածքների ընդլայնման հետ): Բարձրացել է այդ տեսակների պոպուլյացիաների խտությունը, սկսվել է բնական Էկոհամակարգեր դրանց ներթափանցումը և հաստատումը: Այնպիսի ագրեսիվ տեսակների, ինչպիսիք են Ամբրոզիա օշինդրատերևը (*Ambrosia artemisiifolia*), Կաթնափուշ բծավորը (*Silybum marianum*), Երկնածառ բարձրաբունը (*Ailanthus altissima*), Ռոբինիա կեղծ ակացիան (*Robinia pseudoacacia*), ներխուժման հետևանքով բնական համակեցություններում տեղի է ունենում կենսաբազմազանության տեսակային կազմի փոփոխություն: Իրենց բնական աճելավայրերից դուրս են մղվում տեղական տեսակները: Ըստ գիտական եզրակացությունների՝ օտարածին տեսակների ներթափանցմանը նպաստում են տարածքների մարդածին փոխակերպումը և ջերմաստիճանի բարձրացման միտումները:

Համաձայն վերջին տվյալների [11]՝ ԴԱՊ-ում գրանցվել է Ամբրոզիա օշինդրատերև (*Ambrosia artemisiifolia*) օտարածին տեսակի առկայությունը, որը գնահատվել է որպես ինվազիվ: Հիմնականում աճում է խախտված Էկոհամակարգերում (ճանապարհի եզրեր, երկաթգծերի շրջակայք, զբոսայգիներ), ներթափանցում է նաև բնական համակեցություններ: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում՝ ծովի մակերևույթից 400-ից մինչև 1800 մ բարձրության վրա: Տեսակը համարվում է գյուղատնտեսական կարևորագույն վտանգավոր մոլախոտ: Ծաղկափռչին ալերգիկ է, մարդկանց մոտ առաջացնում է ալերգիա, ասթմա և այլ շնչառական խնդիրներ:

Երկնածառ բարձրաբուն (*Ailanthus altissima*) տեսակը նույնպես գնահատվել է որպես ինվազիվ տեսակ և ազատ աճում է ԴԱՊ-ում: Երկնածառը Հայաստան ներմուծվել է դեռևս 1930-ական թվականներին որպես գեղազարդ բույս՝ բնակավայրերի կանաչապատման համար: Ներկայումս աճում է Տավուշի, Լոռու, Արարատի, Արմավիրի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերում, ինչպես նաև Երևանում: Ինտենսիվ աճում և տարածվում է բնակավայրերի տնկարկներում, զբոսայգիներում, փողոցների երկայնքով, գերեզմանոցներում: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում՝ ծովի մակերևույթից մինչև 1500 մ բարձրության վրա: Լայնորեն տարածված է ճանապարհապաշտպան և դաշտապաշտպան անտառաշերտերում: Շատ ագրեսիվ է, հեշտությամբ ներթափանցում է բնական Էկոհամակարգեր՝ առավել հաճախ անտառային: Բույսը հիանալի դիմակայում է հրդեհներին, կայուն է հերբիցիդների նկատմամբ: Համաձայն կանխատեսումների՝ տեսակը շարունակելու է իր տարածումը Հայաստանում՝ մեծացնելով արեալն ու պոպուլյացիաների խտությունը:

